



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn

1278

X^o *Luchely*

and

60.

Apprentice


Erion

187

187

Rochester

1999



Արշակունի

Մարկոսյան Գրադարան


Գրադարան

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԽԱՏՈՅ

ԵՒ


ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱԻՆՏԱՐԱՆԻ



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Ս. Ս. ՄԱՏԹՐՈՍԻ

ԱՍՏՈՒԱՆԸՆՏԻՐԱՆԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՏՓԻՒՍ

Ի ՏԵՐԱՐԱՆԻ Հ. ԵՆՁԻԱՏԵԱՆՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1865

43736-14.2.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ

25-го июня 1865 года. Тюльскъ.




28174-62

28. 1281

1278-ω

9-

ԱՌՍՁԻՆ ՄԱՍՆ



ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆԻՔ



ՀԱՐՅ. Հաւատով ի՞նչ է նա:

ՊԱՏԱՍԽԱՆԻ. Քրիստոնեայ եմ:

Հ. Քրիստոնեայ բառը ի՞նչ կը նշանակէ:

Պ. Քրիստոսի հետևող կամ հաւատա-

ցող:

Հ. Քրիստոնէական վարդապետութիւն ի՞նչ

կը սորվեցընէ:

Պ. Աստուած պաշտութիւն:

Հ. Աստուած ի՞նչպէս պաշտել պէտք է:

Պ. Ճշմարիտ հաւատքով, հաստատուն
յուսով և անկեղծ սիրով:

ԳԼՈՒԽ Ա.

~~~~~:⊙⊙⊙:~~~~~

## Հաւատք :

Հ. Քրիստոնէական հաւատալիքները ո՞ր գրուածքի մէջ կը գտնուին համառօտիւ :

Պ. Հանգանակի մէջ :

Հ. Ո՞րն է հանգանակը :

Պ. « Հաւատամքն է : »

Հ. Գոյ գիտե՞ս :

Պ. Գիտեմ :

« Հաւատամք 'ի մի Աստուած՝ Հայր Ամենակալ՝ յԱրարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից :

« Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՛ միածին, այսինքն՝ յէութենէ Հօր՝ Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած :

Նոյն ինքն 'ի բնութեանէ Հօր, որով ամենայն  
ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք  
և աներևոյթք

«Որ յաղագս մեր մարդկան և վան մե-  
րոյ փրկութեան՝ իջեալ յերկնից՝ մարմնա-  
ցաւ, մարդացաւ, ծնաւ կտտարեւապէս 'ի  
Մարիամայ Սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով :  
Որով էառ մարմին, հոգի և միտք, և վա-  
մենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս և  
ոչ կարծեօք :

«Չարչարեալ, խաչեալ, թաղեալ յերրորդ  
աւուր յարուցեսլ. ելեալ 'ի յերկինս նովին  
մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր :

«Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր,  
դատել զկենդանիս և զմեռեալս : Որոյ թա-  
ղաւորութեան ոչ գոյ վաստճան :

«Հաւատամք և 'ի սուրբ Հոգին՝ յանեղն  
և 'ի կտտարեալն : Որ խօսեցաւ յօրէնս և 'ի  
մարգարէս և յաւետարանս, որ էջն 'ի Յոր-  
դանան, քարողեաց վառաքեալն և բնակեցաւ  
'ի սուրբան :

Հաւատամք և 'ի միմիայն ընդհանրա-  
կան և առաքելական եկեղեցի, 'ի մի մկր-  
տութիւն, յապաշխարհութիւն, 'ի քառու-  
թիւն և 'ի թողութիւն մեղաց, խ'ի յարու-  
թիւն մեռելոց, 'ի դատաստանն յաւիտե-  
նից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն  
երկնից և 'ի կեանսն յաւիտենականս :

«Իսկ որ ասենն, էր երբեմն՝ յորժամ ո՛չ  
էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ո՛չ էր  
սուրբ Հոգին, կամ թէ յոչէից եղեն, կամ  
յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստու-  
ծոյ և կամ զսուրբ Հոգին, զայնպիսիանը-  
պովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի :

«Իսկ մեք փառաւորեցուք որ յառաջ  
քան զյաւիտեանս, երկիրպագանելո՛ւ սրբոյ  
Երրորդութեանն՝ և միոյ Աստուածութեանն  
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ՝ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն :

Հ Այդ Հանգանակը ո՞ր տեղ սահմանուե-  
ցաւ :

Պ. Նիկիոյ ժողովոյն մէջ :

Հ. Նիկիայ ո՞րոնք ժողովեցան :

Պ. Երեք հարիւր տասն և ութը Հայ-  
րասկեաներ :

Հ. Ի՞նչու համար ժողովեցան :

Պ. Արիստ հերետիկոսը դատաւարտելու  
համար :

Հ. Արիստի հերետիկոսութիւնը ի՞նչ էր :

Պ. Արիստ ասէր՝ թէ Հայր Աստուած մեծ  
է, և Որդին արարած է :

Հ. Հանգանակը ո՞վ բերաւ Հայաստան :

Պ. Արիստակէս հայրապետը :

Հ. Ո՞վ էր Արիստակէս հայրապետը :

Պ. Գրիգոր Լուսաւորչի պզտիկ տղան էր :

Հ. «Իսկ մէք փառաւորեցուքը» ո՞վ ասաց :

Պ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ :

Հ. Ա՛յդ Հանգանակի մէջ քանի՞ դիտաւոր  
հաւատալիք կան :

Պ. Ինն :

ա. Գոյութիւն և միութիւն Աստուծոյ

բ. Երրորդութիւն Աստուածային անձանց :

գ. Աւարչագործութիւն Աստուծոյ և նախանշանութիւն .

դ. Մարմնառութիւն Աստուածորդւոյն .

ե. Միւսանգամ գալուստը :

զ. Հոգւոյն սրբոյ Յորդանան իջնելը :

է. Քրիստոսի եկեղեցին և նորա խորհուրդները .

ը. Յարութիւն մեռելոց :

թ. Վերջին դատաստան :

Ա. Գոյութիւն և միութիւն Աստուծոյ .

Հ. Գոյութիւն և Միութիւն Աստուծոյ ասելով ի՞նչ կ'իմանաս :

Պ. Ա'իմանամ թէ Աստուած կայ և մէկ է :

Հ. Աստուած ո՞վ է ?

Պ. Երկնքի և երկրի Ստեղծողն ու կառավարողն է :

Հ. Երկնքի և երկրի ստեղծողը մա՞րդ է .  
հրէշտակ է , ի՞նչ է :

Պ. Ոչ մարդ է, և ոչ հրեշտակ է . Աստուծոյ ինչ լինելը ոչ մարդ կրնայ իմանալ և ոչ հրեշտակ :

Հ. Աստուած ո՞ւր է :

Պ. Զօրութիւնովը ամեն տեղ է . բայց էութիւնովը անպարագլելի է :

Հ. Ո՞ւսկից գիտես թէ Աստուած կայ :

Պ. Արարածներուն վրայ նայելով, ու Աստուածաշունչը կարդալով :

Հ. «Արարած ի՞նչ ասել է :

Պ. «Ստեղծուած, այսինքն՝ ուրիշէ եղած :

Հ. Ո՞ր բանը արարած կ'ըսուի :

Պ. Աստուծմէ զատ ամեն բան արարած է :

Հ. Աստուածաշունչ գիրքը ո՞րն է :

Պ. Հին և նոր կտակարանն է :

Հ. Ի՞նչու համար Աստուածաշունչ կրասուի :

Պ. Անոր համար որ Աստուծոյ շնչովը (այսինքն ազդեցութիւնովը) պրուեցաւ :

Հ. Ո՞վ գրեց Հին կտակարանը :

Պ. Մարգարէները գրեցին :

Հ. Նոր կտակարանը ո՞վ գրեց :

Պ. Առաքեալները գրեցին :

Հ. Աստուծոյ անունը ի՞նչ է :

Պ. Որ էն :

Հ. Ո՞ւսկից գիտես :

Պ. Աստուած Մովսէս մարգարէին յայտնեց՝ ասելով. «Ես եմ՝ Աստուած Որ էն 1» :

Հ. Այդ անունը ի՞նչ կը նշանակէ :

Պ. Կը նշանակը «Ես եմ ինքնագոյ, անփոփոխ, անսկիզբն, անվախճան» :

Հ. Եփրայեցւոց լեզուաւ այդ անունը ի՞նչ պէս կ'ասուի :

Պ. «Եէհովահ» :

Հ. Ուրիշ անունն ևս կրնայ արուիլ Աստուծոյ :

Պ. Կարելի է. զորօրինակ, Տէր, Ամենակալ և այլն



Բ. Երրորդութիւն սատուածային անձանց :

Հ. Աստուածային անձինք քանի՞ են :

Պ. Երեք՝ Հայր, Արդի, Հոգի սուրբ :

Հ. Աստուածային անձինք կը զանազանին :

Պ. Այո՛ անձնաւորութեամբ կը զանազանին :

Հ. Ի՞նչպէս :

Պ. Հօր անձը ուրիշ է, Արդւոյնը ուրիշ է՝

Հոգւոյն Սրբոյ անձը ուրիշ է :

Հ. Բնութեամբ էլ կը զանազանի՞ն :

Պ. Ո՛չ. ինչու որ համարուն, համազոյ, համակրամ, համազօր և համափառ են :



Արարչագործութիւն Աստուծոյ

և Նախախնամութիւն :


Հ. «Արարչագործութիւն» ասելով ի՞նչ կը խմանաս :

Պ. Կ'իմ'նամ թէ Աստուած երկինքը և երկիրը և անոնց մէջ եղած ամեն բանը ոչնչ-

չէ ստեղծեց :

Հ. «Նախախնամութիւն» ասելով ի՛նչ կը կ'իմանաս :

Պ. Ա'իմանամ թէ Աստուած իր ամեն ստեղծուածները իր խնամքովը միշտ կը պահպանէ :



Գ. Մարմնառութիւն Աստուածորդուն :

Հ. Աստուածային երեք անձինքներէն ո՞րը մարմին առաւ :

Պ. Երկրորդ անձը, որ է Որդին :

Հ. Ո՞ւմէն առաւ :

Պ. Առաջ կոչս Մարիամէն :

Հ. Ի՞նչ ասել է «մարմին առաւ» :

Պ. «Մեղէ նման մարդ եղաւ» ասել է :

Հ. Որդին Աստուծոյ մարմին չառած ի՛նչ կը կոչուէր :

Պ. Բան, Միածին Որդի ի և այլն :

Հ. Մարմին առնելէն ետքը ի՛նչ կոչուեցաւ :

Պ. Յիսուս, Քրիստոս, Մեսսիայ, Էմմանուէլ  
 Հ. Էմմանուէլ ի՞նչ լրելու ուլ է և ի՞նչ ասել է :

Պ. Եփրայեցւոյ բառ է և «Մատուած մեղի հետ» ասել է :

Հ. Քրիստոս և Մեսսիայ ի՞նչ լրելու ուլ է և ի՞նչ կը նշանակէ :

Պ. Քրիստոս յունարէն է և Մեսսիայ եբրայերէն, և «Օծեալ» կը նշանակէ :

Հ. Ինչո՞ւ համար «Օծեալ» կասուի :

Պ. Նրա համար որ Հոգին սուրբէն օծուած էր Քահանայապետ Ճշմարիտ, Թագաւոր յաւիտենական և ամեն մարգարէներէն վեր մարգարէ :

Հ. Ո՞ւր սկից յայտնի է թէ Հոգին սուրբէն օծուած էր :

Պ. Քրիստոս ասաց. «Հողի Տեառն ՚ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս» 1 :

Հ. Յիսուս ի՞նչ կը նշանակէ և ո՞ր ազգի բառ է :

Պ. «Փրկիչ» կը նշանակէ և եբրայեցւոց բառ է :

Հ. Ինչո՞ւ համար «Փրկիչ» կ'ասուի :

Պ. Նորա համար, որ մարդկային ազգը փրկեց՝ ազատեց :

Հ. Ի՞նչ բանէ փրկեց :

Պ. Պատիւէն և սատանայի ձեռքէն :

Հ. Ի՞նչ բանով փրկեց :

Պ. Իր շարժարանքովը և մահուամբը :

Հ. Քրիստոս աշխարհի վրայ ի՞նչ քան ա-տեն մնաց :

Պ. Երեսուն երեք տարի, կամ մէ քիչ աւելի :

Հ. Ի՞նչ արաւ այնքան ժամանակի մէջ :

Պ. Շատ հրաշքներ ցուցուց, բժշկութիւններ արաւ, և Արքայութեան ճամբան քարոզեց :

Հ. Ետքը ի՞նչ եղաւ :

Պ. Երկինք համբարձաւ և Աստուծոյ Հօր աջ կողմը նստաւ :

Ե. Միւսանդամ գալուստ Քրիստոսի :

Հ. Քրիստոս նորէն գալու է աշխարհք :

Պ. Գալու է :

Հ. Ի՞նչպէս :


Պ. Իւր Աստուածային զօրութիւնովը և փառքովը :

Հ. Ինչո՞ւ համար գալու է :

Պ. Աննդանի և մեռած մարդիկը գատելու համար :

Հ. Ե՞րբ գալու է :

Պ. Ժամանակը յայտնի չէ, ինչու որ Քրիստոս չուզեց յայտնել :



Զ. Հոգւոյն Սրբոյ Յորդանան իջնելը :

Հ. Հոգին սուրբ երբ իջաւ Յորդանան :

Պ. Երբոր Քրիստոս Յովհաննէս Մկրտիչէն մկրտուեցաւ :

Հ. Ի՞նչպէս իջաւ :

Պ Աղաւնիի կերպարանքով :

Հ. Ինչո՞ւ համար իջաւ :

Պ Քրիստոսի Աստուածութիւնը յայտնելու համար և վկայելու՝ թէ ճշմարիտ Արդի Աստուծոյ է :

Ե. Քրիստոսի Եկեղեցին և նորա  
խորհուրդները :

Հ. Եկեղեցի՞, ո՞ր ազգի բառ է և ի՞նչ  
կը նշանակէ :

Պ Յունաց բառ է և ժողով կամ ժողովուրդ կը նշանակէ :

Հ. Քրիստոսի ժողովուրդը ո՞րն է :

Պ Ամեն ճշմարիտ քրիստոնեաները :

Հ. Քրիստոսի Եկեղեցին քանի՞ նշան կամ յատկութիւն ունի :

Պ Չորս. Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն :

Հ. Եկեղեցին ինչո՞ւ համար մի կամ

«մէկ, կ'ասու ի :

Պ. Նրա համար՝ որ ամեն քրիստոնեաները մէկ հաւատքով մէկ Քրիստոս մէկ Աստուած կը պաշտեն :

Հ. Եկեղեցին ինչո՞ւ համար սուրբ կ'ասու ի :

Պ. Նրա համար՝ որ ամեն քրիստոնեաները մկրտութիւնով մեղքերէն կը սրբուին, և Քրիստոնէական հաւատքը սրբութիւն կը քարոզէ :

Հ. Քրիստոսի եկեղեցին ինչո՞ւ համար «Ընդհանրական» կ'ասու ի :

Պ. Նրա համար՝ որ քրիստոնէութիւնը շատ ազգերու մէջ տարածուած է, և մինչև աշխարհի վերջը մնալու է :

Հ. Ինչո՞ւ համար՝ «Առաքելական» կ'ասու ի :

Պ. Նորա համար՝ որ Քրիստոնէական հաւատքը Առաքելներուն ձեռքովը քարոզուեցաւ և Առաքելներուն խօսքերուն վրայ հաստատուած է :

Հ. Եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի :

Պ. Եօթն՝

ա. Մկրտութիւն.

բ. Դրոշմ՝

գ. Ապանշխարութիւն.

դ. Հաղորդութիւն.

ե. Պատկ Ամուսնութեան.

զ. Կարգ կամ ձեռնադրութիւն :

է. Օծումն հիւանդաց :

Հ. «Մկրտութիւն» ի նչ ասել է և ի նչ բանով կը կատարուի :

Պ. Լուացումն ասել է, ու ջրով կը կատարուի :

Հ. Ինչի՞ օրինակ է :

Պ. Քրիստոսի մահուան և թաղման :

Հ. Ի՞նչ օգուտ ունի :

Պ. Երեխան կը սրբէ կը մաքրէ սկզբնական մեղքերէն, որոց մէջ ծնած է :

Հ. Դրոշմ ի՞նչ կը նշանակէ :

Պ. Նշան կամ կնիք (մէօհիւր) :

Հ Այդ նշանը մարդուն ո՞ր տեղը կը դնեն.

Պ. Հակատին և գղայարանքներուն վրայ:

Հ. Ի՞նչ նիւթով կը կատարուի:

Պ. Արբալոյս մեռնով 'ի ճաշատն:

Հ. Դրոշմի օգուտը ի՞նչ է:

Պ. Քրիստոնէական հաւատքը պահելու համար մկրտեալին դորու թիւն կու տայ:

Հ. «Ապաշխարութիւն» ի՞նչ ասել է:

Պ. Ապա աշխարել, այսինքն կարը լայ:

Հ. Ապաշխարութիւնը ի՞նչպէս պէտք է լինի:

Պ. Կատարեալ գործում և մեղքերը խտատվանելով:


Հ. Ինչով կը կատարուի:

Պ. Աղօթքով, պահօք և վճարմամբ:

Հ. Ի՞նչ օգուտ ունի:

Պ. Մարդը կը սրբէ այն մեղքերէն, որ մկրտութիւնէն կարք գործել է:

Հ. «Հաղորդութիւն» ի՞նչ ասել է:



28174-62

- Գ. Կցորդութիւն կամ մասնակցութիւն :  
 Հ. Ինչո՞ւ համար այդպէս կը կոչուի :  
 Գ. Նորա համար՝ որ հաղորդութիւնով,  
 Քրիստոսի մարմինն ու արիւնը ձաշակելով՝  
 նորա հետ հողով կը կցորդուինք ու մասնա-  
 կից կ'ըլինեմք :  
 Հ. Հաղորդութեան նիւթը ի՞նչ է :  
 Գ. Յօրենի հաց և խաղողի գինի :  
 Հ. Ամուսնութիւնը ի՞նչ է :  
 Գ. Պսակուիլն է :  
 Հ. Ինչի՞ օրինակ է :  
 Գ. Քրիստոսի Եկեղեցւոյ հետ անբաժան  
 միաւորութեան օրինակ է :  
 Հ. Կարգը ի՞նչ է :  
 Գ. Հողևոր պաշտօն է, որ Չեռնադրու-  
 թիւն՝ ևս կ'ասուի :  
 Հ. Ինչո՞ւ համար Չեռնադրութիւն՞  
 կ'ասուի :  
 Գ. Նորա համար որ ձևօք գնելով կը կա-  
 տարուի :

Հ. Ո՞վ ունի ձեռնադրելու իշխանութիւնք

Պ. Եպիսկոպոսը :

Հ. Կարգը քանի՞ աստիճան ունի :

Պ. Եօթն՝

Ա. Դռնապանութիւն :

Բ. Դպրութիւն :

Գ. Երդմնեցուցչութիւն :

Դ. Ջահընկալութիւն :

Ե. Ախասարկաւազութիւն :

Զ. Սարկաւազութիւն :

Է. Քահանայութիւն :

Հ. Եպիսկոպոսութիւնը ի՞նչ է :

Պ. Գլխաւոր քահանայութիւն է, որ քահանայապետութիւն ևս կ'ատուի :

Հ. Աթողիկոսութիւնը ի՞նչ է :

Պ. Գլխաւոր եպիսկոպոսութիւն է՝ նորահամար եպիսկոպոսապետութիւն ևս կ'ատուի :

Հ. Արդապետը ի՞նչ աստիճան ունի :

Պ. Քահանայութեան աստիճան ունի, բայց ուսուցիչ ևս չ'ընելու պարտաւոր է, այսինքն՝

Աստուածային պատգամները մողովութիւն քարոզելու :

Հ. Հիւանդաց օծումը ի՞նչ է :

Պ. Այն օծումն է, որ հիւանդներուն սահմանուած է :

Հ. Ինչո՞վ կը կատարուի :

Պ. Աղօթքով ու օրհնած խղով օծելով :

Հ. Առանց խղով օծելու այդ խորհուրդը չի՞ կրնար կատարուիլ :

Պ. Կարելի է, ինչպէս որ Հայոց Եկեղեցին կը կատարէ միայն քահանայից աղօթքովը :

~~~~~ ❦ ~~~~~

Ը. Յարութիւն մեռելոց :

Հ. Յարութիւն մեռելոց ի՞նչ պէտք է իմանալ :

Պ. Պէտք է իմանալ թէ մեռած մարդիկներուն մարտիները վերջին դատաստանին օրը՝ իրենց հոգիներուն հետ միասորելով՝ յարութիւն պիտի առնուն Աստուծոյ հրամանով :

Թ. Վերջին դատատան :

Հ. Վերջին դատատանը ո՞վ ձախտի անէ :

Պ. Տէր մեր Յիսուս Քրիստոս :

Հ. Ի՞նչպէս :

Պ. Արդարները մեղաւորներէն զատելէն
ևտքը՝ ամեն մէկին իրենց գործքերուն հա-
մեմատ վարձ կամ պատիժ տալու է :

Հ. Արդարները ո՞ւր պիտի լինին, և մե-
ղաւորները ո՞ւր :

Պ. Արդարները երկնից արքայու թեան մէջ,
յակ մեղաւորները դժոխոց մէջ :

Հ. Արքայու թիւնը ի՞նչ է :

Պ. Այնպիսի երջանիկ վիճակ կամ կեանք
է, որ ոչ աչք տեսած է, ոչ անկաջ լսած ունի
և ոչ լեզու կրնայ պատմել :

Հ. Դժոխքը ի՞նչ է :

Պ. Այնպիսի դժբաղդ վիճակ մի է, որ ամեն
տեսակ տանջանքով ու թշուառութիւն-
ներով լեցուն է :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

---:000:---

ՅՊԵ .

Հ. Աստուծոյ ի՞նչ յուսալ պէտք ենք .

Պ. Պէտք ենք յուսալ այն ամեն բարիքները, որ Աստուած խոստացած է իր սիրածներուն :

Հ. Ի՞նչ բարիք խոստացած է :

Պ. Յաւիտենական կեանք, հանդատութիւն և անվախճան երանութիւն .

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

---:000:---

ՍԷՐ .

Հ. Աստուծոյ սէրը մեզմէ ի՞նչ կը պահանջէ :

Պ. Կը պահանջէ որ նորա օրէնքը և պատուիրանքը պահենք .

Հ. Աստուծոյ օրէնքը ի՞նչ կը հրամայեն:

Պ. Չար դործքերէն հեռու կենալ ու բարի առնել:

Հ. Օրէնքը քանի՞ տեսակ են:

Պ. Երկու տեսակ են, բնական ու դրական,

Հ. Բնական օրէնքը ո՞րն է:

Պ. Մարդուս խղճմտանքն է:

Հ. Խղճմտանքը ինչո՞ւ համար օրէնք կը կոչուի:

Պ. Նորա համար որ մարդ խղճմտանքով կրնայ աղէկն ու գէշը ճանչնալ:

Հ. Ինչո՞ւ համար բնական կը կոչուի:

Պ. Նորա համար որ ամէն մարդու սրբախն ակջ բնութենէն կամ ծնած օրէն տրապաւորուած է:

Հ. Բնական օրէնքէն ուրիշ ի՞նչ օրէնքներ ելան:

Պ. Ամէն քաղաքական ու դատաստանական օրէնքները:

Հ. Այն օրէնքները ո՞վքեր հաստատեցին:

j

Պ. Օրինաւ որ թաղաւորներն ու իշխանները:

Հ. Այն օրէնքներուն ևս հնազանդելու պարտակա՞ն եմք:

Պ. Այո՞, ինչպէս որ Աստուծոյ հրամանին:

Հ. Պրահան օրէնքը ո՞րն է:

Պ. Այն օրէնքն է որ Աստուած դրով տը-
ւաւ:

Հ. Ինչո՞ւ համար Պրահան կ'ասուի:

Պ. Նրա համար որ բնական օրէնքէն ետե-
քը դրուեցաւ:

Հ. Պրահան օրէնքը քանի՞ կը բաժնուի:

Պ. Երկուք, այսինքն՝ Հին ու Նոր:

Հ. Հին օրէնքը ո՞րն է:

Պ. Այն է, որ Աստուած Մովսէս ժարգա-
րէի ձեռքովը տուաւ:

Հ. Ո՞ր տեղ տուաւ:

Պ. Սինա լեռը:

Հ. Ե՞րբ:

Պ. Իսրայէլացիները եգիպտոսէն ելնելէն
յիսուն օր ետքը:

Հ. Հին օրէնքը քանի՞ տեսակ էր :

Պ. Երեք տեսակ էր, այսինքն՝ Բարոյական, Միսական և Գառաատանական :

Հ. Հիմա այդ օրէնքները խափանուած են :

Պ. Քրիստոնեայ ազգերուն մէջ Միսական և Գառաատանական օրէնքները խափանուած են. բայց Բարոյական օրէնքը կը մնայ, ինչու որ Քրիստոս զանոնք նորէն հաստատեց :

Հ. Բարոյական օրէնքը ո՞րն է :

Պ. Աստուծոյ տասը Պատուիրանքներն են :

Հ. Տասը սրատուիրանքը ինչի՞ վրայ գրուած էին :

Պ. Երկու քարէ տախտակներու վրայ :

Հ. Գիտե՞ս որոնք են տասը Պատուիրանքները :

Պ. Այո՞ :

Ա. Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն :

Բ. Մի՛ արասցես կուռս :

Գ. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ

Քո 'ի վերայ սնտուեաց :

Դ. Յիշեալ սրբել զօր շարաթու :

Ե. Պատուեալ զհայր քո և զնայր :

Զ. Մի' սպանաներ :

Է. Մի' շնար :

Ը. Մի' գողանար :

Թ. Մի' սուտ վկայեր :

Ժ. Մի' ցանկանար տան ընկերի քո և այլն :

Հ. Առաջին պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ :

Պ. Աը հրամայէ որ բացի Աստուծմէ ուրիշ աստուած չը ճանչնանք :

Հ. Երկրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ :

Պ. Աը հրամայէ որ կուռք չը շինենք՝ կուռք չը պաշտենք :

Հ. Աուռքը ի՞նչ է :

Պ. Քարէ, փայտէ կամ ուրիշ շիւթերէ շինուած պատկեր :

Հ. Երրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ :

9 Գնչին բաներու համար ~~Աստուծոյ անունը~~
~~բերան չաննիր~~ Աստուծոյ անունով
 երդում չաննիր :

Հ. Չորրորդ պատուիրանիով Աստուած ի՞նչ
 կը հրամայէ :

9. Ալ հրամայէ որ շաբաթ օրը սուրբ պա-
 հուի :

Հ. Շաբաթ ո՞ր ազգի բառ է և ի՞նչ կը
 նշանակէ X

9. Եբրայեցւոց բառ է ու հանգստու-
 թիւն կը նշանակէ :

Հ. Քրիստոնեաները պարտաւոր են շա-
 բաթ օրը պահելու :

9. Ո՛չ շաբաթի տեղը կիւրակէ օրը պա-
 հելու պարտաւոր են :

Հ. Ո՞րն է կիւրակէ օրը :

9. Աշխարհի սանդճու ելուն առաջին օրն
 է, ու անոր համար միաշաբաթ ալ կ'ասուի :

Հ. Շաբաթի տեղը կիւրակէ օրը պահելը
 ո՞վ սահմանեց :

Պ. Առաքելաշնորհը սահմանեցին Քրիստոսի
Համբարձումէն ետքը :

Հ. Ինչո՞ւ համար :

Պ. Նորա համար որ Քրիստոս այն օրը յա-
րութիւն առաւ, որ Հողին սուրբ այն օրը
ձեռնատունը իջաւ :

Հ. Հայոց բառ է կիւրակէն :

Պ. Ոչ, Յունաց է, և Տէրունական ասել է :

Հ. Կիւրակէ օրը ինչպէս սուրբ պահել
պէտք է :

Պ. Ծառ այսական գործքերէն ազատ մնալով
ու հոգեշահ գործքերու պարսպելով :

Հ. Ծառ այսական գործքերը որո՞նք են :

Պ. Մարմնաւոր շահերու համար եղած
աշխատութիւններն են :

Հ. Հոգեշահ գործքերը որո՞նք են :

Պ. Եկեղեցի երթալ, աղօթք անել, քա-
րոյ լսել, հոգեւոր գիրք կամ Աւետարան կար-
դալ, դաս սերտել և այլն :

Հ. Հինգերորդ պատու իրանքով Աստուած

ի՞նչ կը հրամայէ :

Պ Աը հրամայէ որ մեր հոգևոր ու մարմնաւոր ծնողքները պատուենք :

Հ. Մեր հոգևոր ծնողքները ո՞վ են :

Պ. Մեր բարերարները, իշխանները, վարժապետները, քահանաները և այլն :

Հ. Ի՞նչպէս արժան է պատուել զանոնք :

Պ. Աստարեալ սէր ու հնազանդութիւն ցուցանելով, ու նոցա երախտիքը չի մոռնալով :

Հ. Աւելցրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ :

Պ. Աը հրամայէ որ մարդ չի մեռցունենք, այսինքն՝ մեր կամքով ուրիշներուն կամ մեր մեռնելուն պատճառ չըլինինք :

Հ. Եօթներորդ, ութերորդ և իններորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ :

Պ. Աը հրամայէ որ շան պէս պատանի թաքտը մեղքերու չի հետևինք, գողութիւն չանենք, սուտ բանի վկայ չըլինինք :

Հ. Տասներորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ :

Պ. Կը հրամայէ որ մեր ընկերներուն կամ ուրիշին ունեցածներուն ամենեւին աչք չի գնենք ու չի յափշտակենք :

Հ. Նոր օրէնքը ո՞րն է :

Պ. Քրիստոսէն աւանդուած ու Առաքեալներէն քարոզուած ու զրուած պատուիրանքներն են :

Հ. Քրիստոսի պատուիրանքները ի՞նչ կը հրամայեն :

Պ. Կը հրամայեն որ մեղքերէն ու մտաւթիւններէն զզուշանանք, ու առաքինութիւն գործենք : ★

Հ. Մեղքերը քանի տեսակ են :

Պ. Երկու՝ Սկզբնական ու Ներգործական :

17 Հ. Սկզբնական մեղքը ո՞րն է :

Պ. Ազամայ գործած մեղքն է, որ է անհնազանդութիւն :

Հ. Ազամ ի՞նչ բա՛ի անհնազանդ եղաւ :

Պ. Աստուած նորան պատուիրած էր որ բարին ու չարը գիտնալու ծառին պտուղէն չուտէ. բայց նա չի հնազանդելով կերաւ:

Հ. Ի՞նչ տեսակ ծառ էր այն:

Պ. Յայտնի չէ, ինչու որ Աստուածաշնչի մէջ անուանովը գրուած չէ:

Հ. Ներգործական մեղքը ո՞րն է:

Պ. Այն մեղքն է, որ մենք մկրտութիւնէն ետքը կը գործենք:

Հ. Քանի՞ կը բաժնուին:

Պ. Երկու, այսինքն՝ մահու չափ ու ներելի:

Հ. Մահու չափ մեղքերը որո՞նք են:

Պ. Ծանր ծանր մեղքերն են:

Հ. Ներելիները որո՞նք են:

Պ. Պղտիկ ու թեթեւ մեղքերն են:

Հ. Պլխաւոր մոլութիւնները քանի՞ են:

Պ. Եօթն

Ա. Հ պարտութիւն,

Բ. Նախանձ,

Գ. Բարկութիւն,

- Դ. Ծուլութիւն ,
- Ե. Ազահութիւն ,
- Զ. Որկրամոլութիւն :
- Է. Բզջատհոտութիւն
- Ը. Հպարտութեան դէմ ինչ առաքի-
նութիւն գործել պէտք է :
- Պ. Խոնարհութիւն :
- Հ. Նախանձութիւն ,
- Պ. Եղբայրսիրութիւն :
- Հ. Բարկութեան դէմ :
- Պ. Հեղութիւն ու համբերութիւն :
- Հ. Ծուլութեան դէմ :
- Պ. Արիութիւն, աշխատութիւն :
- Հ. Ազահութեան դէմ :
- Պ. Ողորմածութիւն աղքատասիրութիւն :
- Հ. Որկրամոլութեան դէմ ,
- Պ. Բարեխառնութիւն , այսինքն ուտելու
և խմելու չափաւորութիւն :
- Հ. Բզջատհոտութեան դէմ :
- Պ. Ողջատհոտութիւն կամ ժուժկալու

[Թիւն, որ աղօթքով Աճմէ ընդունիլ կարենք:

Հ. Աղօթքը քանի՞ կերպ է:

Պ. Երկու. հրասպարակական և առանձնական:

Հ. Հրասպարակական աղօթքը ո՞րն է:

Պ. Եկեղեցիներումն մէջ բազմուց [Թիւնով] ուրիշներու հետ մէկ տեղ եղած աղօթքն է:

Հ. Առանձնական աղօթքը ո՞րն է:

Պ. Այն է, որ մենք մինակ խուցի կամ սենեակի մէջ նստած կը կատարենք:

Հ. Աղօթքներուն զիսաւորը ո՞րն է:

Պ. Տէրունական աղօթքն է. այսինքն « Հայր մեր »:

Հ. Ինչո՞ւ համար այն աղօթքը « Տէրունական կ'ասուի »:

Պ. Նորա համար որ Տէրն մեր Քրիստոս աւանդեր է:

Հ. « Հայր մեր » ինչ մէջ քանի՞ խնդրուածներ կան:

Պ. Եօթն:


- Ա. Հայր մեր որ յերկինս ես, սուրբ
եղիցի անուն քո :
- Բ. Եկեսցէ արքայութիւն քո :
- Գ. Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս
և յերկրի :
- Դ. Զհաց մեր հանապազորդ սուր մեզ
այսօր :
- Ե. Թող մեզ զպարտիս մեր, որպէս և
մեք թողումք մերոց պարտապանաց :
- Զ. Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձու-
թիւն :
- Է. Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ :
- Զի քո է արքայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս. ամեն :

Վ. ԵՐԶ :

ՄԱՆՐ ՈՒՍՄԱՆՅ


ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՅՈՅ :

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ



ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ



Հ. «Աւետարան» ըստ ի՞նչ կը նշանակէ:

Պ. Աւետիք կամ բարի լուր պարունակող:

Հ. Ո՞վ գրեց Աւետարանը:

Պ. Չորս աւետարանիչները՝ Մատթէոս,
Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս:

Հ. Ի՞նչ լեզուաւ գրեցին:

Պ. Մատթէոս՝ եբրայեցւոց, Մարկոս՝ ե-
գիպտացւոց, Ղուկաս՝ Ասորոց, Յովհաննէս՝
Թունաց լեզուաւ:

Հ. Սուրբ Աւետարանի ձեռք ինչ բաներ
կը սրտումն ին :

Պ. Ա. Քրիստոսի ծնունդը :

Բ. Քրիստոսի Մկրտութիւնը :

Գ. Քարոզութիւնները :

Դ. Հրաշագործութիւնները :

Ե. Զարչարանքը, Մահը, և Թա-
ղումը :

Զ. Յարութիւնը :

Է. Համբարձումը :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ



Քրիստոսի ծնունդը :

Հ. Քրիստոս ունե՞ն ծնա :

Պ. Սուրբ կոյս Մարիամն :

Զ. Արո՞ւն աղջիկն էր սուրբ կոյս Մարիամը :

Ս. Յովակիմին ու Աննային :

Զ. Քրիստոսի հայրը ո՞վ էր :

Պ Ըստ մարմնոյ հայր չ'ունէր, բայց ըստ Աստուածութեան՝ Հօր Աստուծոյ որդին էր :

Հ. Հապա ինչո՞ւ համար Որդի Դաւթի և Որդի Յովսէփայ կ'ասուի :

Պ. Որդի Դաւթի նորա համար կ'ասուի, որ Մայրը Մարիամ՝ Դաւիթ մարգարէին ցեղէն էր. իսկ Որդի Յովսէփայ ասուելուն պատճառը այն է որ՝ Մարիամ սուրբ Յովսէփին հետ նշանուած էր :

Հ. Սուրբ Յովսէփ ո՞ր ցեղէն էր :

Պ. Նա ևս Դաւիթ մարգարէի ցեղէն էր :

Հ. Արհեստը ի՞նչ էր :

Պ. Հիւանութիւն (ախրկարութիւն) :

Հ. Մարիամը ինչո՞ւ համար Աստուածածին կամ Աստուածամայր կ'ասուի :

Պ. Նորա համար որ նորամէն ծնած Քրիստոսը ոչ միայն մարդ էր, այլ և Աստուած ու Որդի Աստուծոյ :

Հ. Քրիստոսի ծնունդը երբ եղաւ :

Պ. Աշխարհի ստեղծմանէն չորս հարկար օր-

րի ետքը, Հերովդէս Ասկաղոնացիին ժամանակը:

Հ. Հերովդէս ո՞վ էր :

Պ. Հրէից թագաւոր էր, Հռովմայեցիներու
բուն իշխանութեան տակը:

Հ. Ո՞ւր կը նստէր:

Պ. Երուսաղէմ:

Հ. Այն ժամանակը Հռովմայեցիներուն
թագաւորը ո՞վ էր:

Պ. Օգոստոս կայսրը:

Հ. Հայոց թագաւորը ո՞վ էր:

Պ. Աբդար՝ Արշամին տղան:

Հ. Ո՞ւր ծնաւ Քրիստոս:

Պ. Բեթղեհէմ քաղաքի մօտ՝ մսուրի մէջ:

Հ. Քրիստոսի ծննդնէն ետքը ի՞նչ անուն
դրին:

Պ. Ծննդեան ութերորդ օրը՝ անունը Յի-
սուս դրին:

Հ. Ո՞վ ասաց որ այդ անունը դնեն:

Պ. Գարրիէլ հրեշտակապետը:

Հ. Ե՞րբ

Պ. Երբ որ Քրիստոսի ծնանելուն համար
Ծարիավին աւետիս տուաւ :

Հ. Քրիստոս առաջ ո՞ւմ յայտնուեցաւ :

Պ. Հովիւներուն :

Հ. Ի՞նչպէս :

Պ. Գիշեր ժամանակ երկինքէն հրեշտակ
իջաւ ու ասաց,

«Ձեզ աւետիք,

Փրկիչ ծնաւ,

Ուրախ եղեք :

Հ. Բացի այն հրեշտակէն ուրիշ հրեշտակ-
ներ ևս իջան :

Պ. Այո՛, շատ հրեշտակներ իջան ու ըս-
կան երգել « Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և
յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճու-
թիւն » :

Հ. Հովիւները գնացին Քրիստոս տեսնելու :

Պ. Այո՛, վաղեցին՝ Բեթղեհէմ գնացին
ու Քրիստոսը գանելով՝ երկիրպագութիւն արին :

Հ. Հեթանոսներէն ևս եկողներ եղան Յիւ-

սուսին երկիրսպազու թիւն անելու :

Պ. Երեք մողերը եկան, որոնք խմաստուն
ու թագաւորի պէս հարուստ մարդիկ էին :

Հ. Նորա ո՞ր կողմէն եկան :

Պ. Արևելեան հեռաւոր երկիրներէն :

Հ. Նորա ի՞նչպէս խնացան Քրիստոսի ծը-
նունդը :

Պ. Երկինքը նորա աստղը տեսնելով :

Հ. Ուր ծնանելը գիտէի՞ն :

Պ. Չէին գիտեր. նորա համար՝ երբ որ
Երուսաղէմ հասան սկսան հարցանել Ուր
է նորածին թագաւորը » :

Հ. Հերովդէս ընց այդ բանը :

Պ. Լսեց ու շատ վախեցաւ :

Հ. Մողերուն բան չ'ասաց :

Պ. Ասաց, որ նորածին թագաւորը գտնե-
լէն ետքը՝ իրեն ևս խնաց անեն :

Հ. Մտաքը ի՞նչ էր :

Պ. Մտաքը այն էր, որ Յիսուսի սպանել
տայ :

Հ. Ինչո՞ւ համար այդ չար միտքը ունեցաւ :

Պ. Նորա համար որ՝ չըլինի թէ Յիսուս թագաւոր լինի՝ և իրեն թագաւորութիւնը ձեռքէն առնէ :

Հ. Մոզերը կարգցի՞ն Յիսուսը գտնել :

Պ. Այո՛, գնացին գտան, երկրպագութիւն արին ու ընծայ տուին :

Հ. Ի՞նչ ընծայ տուին,

Պ. Ոսկի խունկ, ու զմուսս :

Հ. Ետքը մոզերը Հերովդէսին հանդիպեցա՞ն :

Պ. Ա՛յ, ուրիշ ճամբայով դարձան իրանց տեղը գնացին :

Հ. Ա՛յ պատուիրեց նոցա որ այդպէս անեն :

Պ. Հրեշտակը երազին մէջ նոցա երեւնալով՝ պատուիրեց :

Հ. Հերովդէս չը բարկացա՞ւ, որ մոզերը գինքը խաբեցին :

Պ. Ի՞նչպէս չէ, այնպէս բալկացաւ՝ որ բեթղեհեմի սահմանին մէջ գտնուած երկու

տարեկան տղաներուն բողոքին սպաննել տը-
լաւ :

Հ. Ի՞նչ դիտաւորութիւնով այդ անգը-
թութիւնը գործեց :

Պ. Այն դիտաւորութիւնով, որ Յիսուս ևս
այն տղաներուն հետ սպաննուի :

Հ. Հելովդէսի այդ դիտաւորութիւնը կա-
տարուեցա՞ւ :

Պ. Չէ, ինչու որ Յիսուս կոտորածէն ա-
զատեցաւ :

Հ. Ի՞նչպէս :

Պ. Յովսէփ՝ Յիսուսի մօրը հետ առաւ ու
Եգիպտոս փախցուց :

Հ. Ո՞վ պատուիրեց որ այնպէս անէ :

Պ. Հրեշտակը Յովսէփին երևնալով երա-
զին մէջ :

Հ. Եգիպտոս ի՞նչքան մնացին :

Պ. Մինչև Հերովդէսին մեռնելը, այսինքն՝
երկու կամ ըստ ոմանց եօթը տարի :

Հ. Ետքը ո՞ւր գնացին :

Պ. Նորէն Հրէաստան դարձան ու Նազա-
րէթ բնակեցան, նորա համար Յիսուս Նա-
պօլրեցի կոչուեցաւ :



ՅԱԻԵԼՈՒԱԾՔ

Քրիստոսի քառանօրեայ ընծայումը
ու տաճարին մէջ վարդապետելը :

Հ. Յիսուսի՝ տաճարը ընծայուիլը ի՞նչ
պէս եղաւ :

Պ. Մարիամ Աստուածածին Յիսուսին տա-
ճարը տարաւ ու հետը երկու տասորակ կամ
աղաւնիի ձագ առաւ :

Հ. Մարիամ ինչո՞ւ համար հետը տասո-
րակ կամ աղաւնի տարաւ :

Պ. Պատարագ մատուցանելու համար ինչ-
պէս որ Մովսիսական օրէնքին մէջ գրուած է :

Հ. Այն ատենը ի՞նչ երեւելի բան պատա-
հեցաւ :

Պ. Սիմէօն ծերունին տաճարին ձէջն էր,
ու երբ որ Յիսուսը տեսաւ՝ գիրկը առաւ :

Ատուծոյն փառք տուաւ ու ասաց Տէր, ահա
 աչքս տեսաւ Փրկիչն ու հեթանոսներուն լոյ-
 սը, էլ այտուհետեւ թող մեռնիմ :

Հ. Ատուածածնին ևս բան ասաց :

Պ. Այս խօսքերը ասաց « Ահա՛ քու այդ
 զաւակդ շատ մարդերու փրկութեանը ու շատ
 մարդերու կորստեանը պատճառ լինելու է, ու
 քու սիրտդ սուր մտնելու է :

Հ. « Քու սիրտդ սուր մտնելու է » ասե-
 լովը ի՞նչ ուղեց յայտնել :


Պ. Սա ուղեց իմացանել թէ « որդ-
 ւոյդ չարչարանքն ու հրէաներուն անհաւա-
 տութիւնը տեսնելով՝ սիրտդ վերաւորուե-
 լու է » :

Հ. Յիսուսին Փրկիչ լինիլը՝ Սիովոն պէս
 ուրիշն ևս հասկացաւ :


Պ. Այո՛, Աննա մարդարէն՝ որ ութսուն
 ու չորս տարեկան այրի էր, ու տաճարէն չէր
 հեռանար, սկսաւ Ատուծոյն փառք տալ և՛
 Յիսուսի Փրկիչ լինիլը քարոզել :

Հ. Յիսուս մի քիչ մեծնայէն ետքը՝ ինչ
 վարմանակի գործ ցոյց տուեց :

Պ. Երբ որ տասներկու տարեկան էր՝ տա-
 ճարին մէջ կարդացող ու գիտուն մարդերուն
 բան կը հարցնէր, ու բան կը խօսէր, այնքան
 իմաստութիւնով որ լսողները կը վարմանային:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ



Քրիստոսի Մկրտութիւնը :

- Հ. Յիսուս ումմէ՞ն մկրտուեցաւ :
- Պ. Յովհաննէս Մկրտիչէն :
- Հ. Յովհաննէս Մկրտիչն որո՞ւն տղան էր :
- Պ. Զաքարիա քահանային ու Եղիսարէ-
թին :
- Հ. Ո՞ւր կը բնակէր :
- Պ. Անապատը :
- Հ. Ի՞նչպէս կեանք կ'անցընէր :
- Պ. Ճգնաւորի ու մարգարէի պէս :
- Հ. Ի՞նչ էր կերածը :
- Պ. Մարախ ու վայրենի մեղք :
- Հ. Հագուստը ի՞նչէ էր :
- Պ. Ուղտի բուրդէ :
- Հ. Կապած դօտի՞ն :
- Պ. Կաշիէ :

Հ. Անապատին մէջ ի՞նչ կ'անէր :

Պ. Այլ քարոզէր, որ մարդիկ ասպաշխարհն իրանց մեղքերուն համար :

Հ. Ասպաշխարհներուն ի՞նչ կ'անէր :

Պ. Յորդանան գետին մէջ կը մկրտէր :

Հ. Յիսուս մեղքերէն սրբուելու համար մկրտուիլ ուզեց :

Պ. Այ, նա մեղք չ'ունէր :

Հ. Հասա ինչո՞ւ համար :

Պ. Չուրը սրբելով՝ մեր մկրտութեան խորհուրդը հաստատելու համար :

Հ. Յիսուսի մկրտութեան ժամանակ ի՞նչ հրաշալի տեսիլք պատահեցաւ :

Պ. Հողին սուրբ աղաւնիի կերպարանքով Յիսուսի վրայ իջաւ, ու երկինքէն ձայն եկաւ : Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ :

Հ. Յիսուս մկրտուած ատենը քանի՞ տարեկան էր :

Պ. Երեսուն տարեկան էր :

ՅԱԻԵԼՈՒԱԾ

--- ❦ ---

Յովհաննէս Մկրտիչ :

Հ. Հրեաները Յովհաննէս Մկրտչի վրայ
ի՞նչ կարծիք ունեցան :

Պ. Արքեպիսկոպոս թէ նա է Մեսիայն , այս-
ինքն Քրիստոսը , ում համար մարգարէները
գրած էին :

Հ. Ինչքը իրան համար ի՞նչ ասաց :

Պ. Ասաց « Քրիստոսը ես չեմ , նրա կա-
րասկանն եմ » :

Հ. «Արասկետ» ի՞նչ կը նշանակէ :

Պ. Առաջը գնացող , ճանապարհ բաց ա-
նող :

Հ. Յովհաննէս Մկրտիչ ի՞նչ ասաց Յիսու-
սի համար :

Պ. Ասաց թէ «Սա է զառն Աստուծոյ ,

որ աշխարհքի մեղքը կը ջնջէ. նրան հաւատացողը յաւիտենական կեանք կ'ընդունի, ու չը հաւատացողը Աստուծոյ բարկութեան տակ կը մնայ :

Հ. Յովհաննէս Մկրտիչ՝ Յիսուսին մկրտելէն ետքը՝ ո՞ւր գնաց, ի՞նչ եղաւ :

Պ. Երկու տալիի չափ բանտը մնաց ու այնուհետեւ գլխատու եցաւ :

Հ. Ո՞վ գլխատել տուեց :

Պ. Հերովդէս Անթիպաս՝ որ Քալիկեացւոց աշխարհի շորորդապետն էր, ու առաջին Հերովդէսի որդին էր :

Հ. Միթէ Յովհաննէսին թշնամի՞ն էր :

Պ. Այո՛, ինչու որ Յովհաննէսը նորա չար դործքերուն համար՝ յանդիմանութիւն էր արել :

Հ. Յովհաննէսի մարմինը ո՞վ թաղեց :

Պ. Իրան աշակերտները թաղեցին :

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ



Քրիստոսի քարոզութիւնները :

Հ. Յիսուս ժկրտուելից յետոյ ո՞ւր գնաց :

Պ. Երիբովի անապատը գնաց :

Հ. Այնտեղ ի՞նչ արաւ :

Պ. Քառասուն օր ծոմ պահեց ու փոր-
ցիչ սատանային յազթեց :

Հ. Յետոյ ի՞նչ արաւ :

Պ. Սկաւ աշակերտներ ժողովել, քարոյել
ու սորվեցրնել :

Հ. Աշակերտներին զլուսաւորները ի՞նչ աս-
ուեցաւ :

Պ. « Առաքեալ » ասուեցան, որ զըկուած
կընշանակէ, ինչու որ աստ և անդ զըկուե-
ցան քարոզութիւն անելու :

Հ. Առաքեալները քանի՞ էին :

Պ. Տասներկու :

Ա. Պեարոս

Բ. Անդրէաս

Գ. Յակոբոս

Դ. Յովհաննէս

Ե. Վլիկպոս

Զ. Բարդուղիմէոս

Է. Թովմաս

Ը. Մատթէոս

Թ. Յակոբոս Արիւան

Ժ. Ղէբէոս (կամ Թադէոս)

ԺԱ. Սիսն կանանոցի

ԺԲ. Յուդայ իսկարիովտացի :

Հ. Յիսուս ի՞նչ կը քարոզէր :

Պ. Կը քարոզէր, որ մարդիկ իրան հաւատան, ապաշխարեն, առաքինութիւն գործեն, որ երկնից արքայութեան արժանի ընին :

Հ. Ի՞նչ է առաքինութիւնը :


Պ. Առաքինութիւն կ'ասուի ամեն գործ, որ Աստուծոյ ընդունելի ու մարդոց առջև գովելի է :

Հ. Յիսուս իր քարոզութիւններուն մէջ
ի՞նչ առաքինութիւններ սորվեցուց :


Պ. Ճշմարտութիւն սիրել, սուրբ սրտով
Աստուած ճանաչել, հոգևով պաշտել, հեզ,
խոնարհ, համբերող, և զբայրասէր լինել, ու
սորանց նման բարի բաներ սորվեցուց :

Հ. Ուրիշ ի՞նչ խրատներ տուեց :

Պ. Անդճաւորութիւնից փախչել, հպար-
տութիւն չ'անել, ոխ չ'աբահել, բաժնասանք
չ'անել, սուտ չ'ըստիլ, աւելորդ հոգեր չ'ու-
նենալ, և այլն :



ԳԼՈՒԽ ԶՈՐՐԻՐ



Քրիստոսի հրաշագործութիւնները:

Հ. Յիսուս ի՞նչ հրաշքներ գործեց :

Պ. Հիւանդները բժշկեց, ցուազարները ողջացրուց, դիւահարները ազատեց, խուլերին ականջներն ու համբերուն (մունջերուն) լեզուները բացաւ, կոյրերուն աչքերը լուսաւորեց, կաղերը լուացրուց և անդամալուծները սոք հանեց :

Հ. Յիսուս այսպէս բժշկութիւններ անելու ժամանակը ի՞նչ դեղեր կը գործածէր :

Պ. Պէղ չէր գործածէր, բայց միայն իրան աստուածային կարողութիւնովը ու հրամանաւը հրաշքներ կ'անէր :

Հ. Յիսուսի ցոյց առած հրաշքներէից առաջինը ո՞րն էր :

Պ. Ձուրը գինիի փոխելն էր :

Հ. Այդ հրաշքը երբ և ո՞ր արաւ :

Պ. Աննա Գալիլեացւոց ասուած քաղաքը, երբ որ Յիսուս մօրը հետ մէկ տեղ հարսանիքի մէջ նստած էր :

Հ. Ի՞նչպէս եղաւ :

Պ. Հարսանիքի ուրախութեան ժամանակը գինին պակսեցաւ, Մարիամ Յիսուսին յայտնեց. Յիսուսն էլ խօսքը պատուելու համար՝ ծառաներին հրամայեց, որ դատարկ փարչերը ջրով լցնեն, ու լցնելէ յետոյ՝ տեսան, որ ջուրը պատուական անոյշ գինի է եղեր :

Հ. Փարչերը քանի՞ հատ էին, ու ո՞րչափ գինի կրնային պարունակել :

Պ. Այն հատ էին, ու ամեն մէկը՝ երկու կամ երեք մար՝ գինի կ'առնէր :

Հ. Յիսուս ուրիշ հրաշքներ էլ ցոյց տուե՞ց :

Պ. Ի՞նչպէս չէ. ծովուն կատղած ալիքն՝ ինչ ու սաստիկ հողմը դադարեցուց. ծո-

1 Մար՝ չափոյ անուն է :

վուն վրայ ստիպով ման եկաւ. և երկու ան-
գամ էլ՝ մէկ օրհնելովը քիչ հացը շատա-
ցուց :

Հ. Առաջին անգամ քանի՞ հաց շատա-
ցուց :

Պ. Հինգ հացն ու երկու ձուկը :

Հ. Այն հացերէն ու ձկներէն քանի՞ մարդ
կերան :

Պ. Հինգ հազար մարդ կերան՝ բացի կնիկ-
ներէն ու սրբօրիկ տղաքներէն :

Հ. Կարողացան կշտանալ :

Պ. Այո. այնպէս կշտացան, որ տասներկու
սակառի (քթոց) էլ հացի կտորասանք վե-
րուցին :

Հ. Երկրորդ անգամին քանի՞ հացը շատա-
ցուց :

Պ. Եօթն հաց քանի մի ձուկերու հետ :

Հ. Այն հացերէն ու ձուկերէն քանի՞
հոգի կերան :

Պ. Բացի կնիկներէն ու սրբօրիկ տղաքներէն՝

չորս հազար հայի կերանն ու եօթն զախիւղ
(զախիւղ) ընքը հայի կոորտանք աւելցան :

Հ. Յիսուս մեռած մարդերու էլ յարու-
թիւնն սուսու :

Պ. Այն, երեք մեռած մարդ կենդանա-
ցուց :

Հ. Այն մեռածները ո՞վ էին :

Պ. Առաջինն էր Յայրոս իշխանին տասն-
երկու տարեկան աղջիկը :

Երկրորդն էր՝ այրի (նկան մը մէկ հատիկ
զաւակը հային քաղաքի մէջ :

Երրորդն էլ Յիսուսի բարեկամը Ղազարոսն
էր որ թեթանխա քաղաքը կրնասեր :

Հ. Յիսուս Յայրոսի աղջիկը ի նշպէս կեն-
դանացուց :

Պ. Չեռքէն բռնեց, եփրայերէն լեզուաւ
՝ Տալիթա, կու մի » սասայ :

Հ. Այն խօսքը ի նշ կրնշանակէ :

Պ. Ո՞վ աղջիկ վ՛ր կայ :

Հ. Այն կնիւն զաւակը ի նշպէս յարոց :

Պ. Երբ որ նորան թաղելու կը տանելին, Յիսուս դադարուն մտակցաւ ու մեռելին ասաց « Քեզ կ'ասեմ, կանդնէ՛ » : Մեռելը խնկոյն կանգնեցաւ, նստաւ :

Հ. Յիսուս՝ Ղազարոսին էլ շրթաղուած յարոյց :

Պ. Ո՛չ. մեռնելէն ու շորս օր թաղուած մտակն ետքը :

Հ. Ղազարոսը յարուցանելու ժամանակը՝ Յիսուս ինչ ասաց :

Պ. « Ղազարէ, արի՛ եկ արտաքս » :

Հ. Ղազարոս այն ձայնը լսեց :

Պ. Լսեց ու խնկոյն վերկացաւ, կանդնեցաւ ¹ :

Հ. Չե՞սքն ու ոտքը կապած չէի՞ն :

Պ. Կապած էին. բայց Յիսուս հրամայեց, որ արձակենն :

1. Ղազարոս կենդանութիւն անելէն յետոյ 15 տարի էլ սպրեցաւ, բայց կասեն, ամենեկին չի խնդաց :

ՅԱԻԵԼՈՒԱԾՔ

Ա. Քրիստոսի Աշակերտացու խիւնը :

Հ. Յիսուս իւր աստուածային փառքը ինչ
նշանով կամ անսխլքով աշակերտներին ցոյց
տուեց :

Պ. Թաքօր լերան վրայ՝ Պետրոս, Յակով-
բոս և Յովհաննէս աշակերտներուն առջևը՝
այլակերպելով, այսինքն իւր կերպարանքը փո-
խելով :

Հ. Ի՞նչպէս այլակերպեցաւ :

Պ. Երեսը արևու նման, և զգեստները
ձիւնի նման փայլուն ու սպիտակ երևեցան :

Հ. Այն անսխլքին մէջ ուրիշ մարդիկ էլ
երևեցան :

Պ. Այս՝ Մովսէս ու Եղիա մարգարէներն
էլ երևեցան :

Հ. Աշակերտներուն հետ խօսեցա՞ն :

Պ. Ո՛չ, միայն Յիսուսի հետ խօսեցան :

նորա չարչարանքներուն ու մահուան վրայ :

Հ. Ետքը ի՞նչ եղաւ :

Հ. Լուսաւոր ամայր իջաւ, զմնանք ծածկեց: ու երկնքէն մի ձայն ելաւ « Գա է որդի ի՛՛՛՛՛ սիր՛ լի, զմա՛ լուարուք :

Հ. Սշակերաները որ այդ ակասան ու լսեցին, ի՞նչ եղան :

Պ. Զարեանցան՝ վախեցան ու երեսի վրայ ընկան . բայց Յիսուս բռնեց կանգնեցուց նորանց :

Հ. Այդ հրաշալի տեսիլքը երկար տևեց:

Պ. Ոչ . ինչու որ աշակերանները կանգնեցէն յետոյ՝ ակասան, որ բայի Յիսուսէ՛ մէկը չը կայ :

--- ԽԹ ---

Բ. Յիսուսի թշնամիները :

Հ. Յիսուսի հրաշքները անանողներն ու քարոզութիւնները լսողները նրա Աստուածութեանը հաւատացին :

Պ Ռեմանք հաւատացին ու. տեանք չը հաւատացին :

Հ. Չը հաւատաւ: ցողները սով էին :

Պ. Աորա թ շնամինները, որոնք էին զպիրները, փարիսեցիները, քահանաները, աշխարհասէր իշխանները և ծերերը:

Հ. Պպիրները սով էին :

Պ. Հրէաներուն վարդապետները :

Հ. Փարիսեցիները սով էին :

Պ. Փարիսեցի առուածները կեղծաւոր՝ հըպարտ՝ ազահ և խաբերայ մարդիկ էին, ու ինքնիրանց ուրիշներէն աւելի արդար և օրինաւորահ կը համարէին :

Հ. Եղովլուրդները Յիսուսին պատիւ կը տային :

Պ Եղովլուրդոց շատերը, որ Յիսուսի հըրաշքները տեսած կամ լսած էին, նորան հետեւիլ և անունը փառաւորել կը ցանկացին :



Գ. Քրիստոսի Երուսաղէմ դալը :

Հ. Յիսուսի անունը ե՛րբ աւելի հռչակեցաւ :


Պ. Երբ որ իշոյ և աւանակի վրայ նստած Երուսաղէմ մտաւ :

Հ. Այ՛տ ի՞նչպէս եղաւ :

Պ. Երբ որ յողովուրդը լսեց թէ Յիսուսը կուգայ, արմաւենիի և ձիթենիի ճիւղեր ձեռքերնին բռնած առջևը ելան, ու զգեստները գետինի վրայ փռելով՝ յէծ ու պզտիկ սկսան աղաղակել : Ովսաննա, օրհնեալ, որ դասդ յանուն Տեառն, թագաւորդ խորայէլի» :

Հ. «Ովսաննա» ի՞նչ կը նշանակէ :

Պ. Եբրայեցերէն կը նշանակէ «Ով Յեսուկամ Յիսուս, փրկեա՛ զմեզ» և կամ «փրկու թիւն ՚ի բարձանց» :



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Քրիստոսի շարչարանքը, մահը
և թաղումը :

Հ. Յիսուս իրան շարչարանքին ու մահուան
համար աշակերտներուն առաջուց բան ասաց :

Պ. Ատաց թէ երկու օրէն յետոյ զատիկ
կը լինի, ու ինձ շարչուիլ ու մեռնիլ պէտք է :

Հ. Այդ կատարուեցա՞ն :

Պ. Այո՛, ինչու որ Յիսուսի թշնամիները
կայիափա քահանայապետի տունը ժողովե-
լով՝ խորհո՞ւրդ արին, որ Յիսուսը բռնեն ու
սպանեն :

Հ. Յիսուսը ո՞վ մտտնեց կամ բռնել տուաւ :

Պ. Յուդայ խկարիովտացին, որ Յիսուսի
աշակերտներէն մէկն էր :

Հ. Յուդայի այդպիսի ասերախօտութեան
սրտմաւր ի՞նչ էր :

Պ. Իրան ազահութիւնն ու արծաթսիրութիւնը :

Հ. Աւելան Յիսուսի թշնամիները փող խոստայեր էին Յուդային :

Պ. Այո՛, երեսուն արծաթ խոստայել էին, ու տուին :

Հ. Յիսուս դիտէր, որ Յուդա իրան պիտի մատնէր :

Պ. Գիտէր, բայց չուզեց որ անունը տալով յայանէ :

Հ. Առանց անունը տալու յայանեց :

Պ. Այո՛, բաղարձակերաց տոնին առաջին իրիկունքը երբ որ սեղան նստած էին՝ աշակերտներուն աւաց : Ձեր մէջէն մէկը զիս մատնելու է :

Հ. Աշակերտները չը հարցուցին թէ ո՞վ է :

Պ. Հարցուցին, ու Յիսուս աւաց, « ո՞ւմ որ պատասխար թաթխեմ՝ տամ՝ նա է :

Հ. Ո՞ւմ տուաւ :

Պ. Յուդային տուաւ՝ ասելով, « Գնա՛ ինչ որ

անելու ես՝ շուտով արա՛ :

Հ. Յուդան զնայց այն ժամանակը :

Պ. Այ՛, ուղիղ քահանաներուն ու դր-
պիրներուն մօտը վնաց. խոստացաւ նոցա, որ
Յիսուսին մասնէ :

Հ. Յիսուս յետոյ ի՞նչ արաւ :

Պ. Սկսաւ աշակերաններուն մխիթարական
խօսքեր ասել ու պարտէզի միջ առանձնանա-
լով աղօթել :

Հ. Յուդա ի՞նչպէս կատարեց իր շար կամքը :

Պ. Այ՛, զիշերին՝ քահանայապետին ծա-
ռաներուն ու վինուորներուն հետ մէկ տեղ
Յիսուսի եղած աեղը եկաւ. ու բռնել տը-
ւաւ նորան :

Հ. Յիսուսին ի՞նչ նշանով կարողացան ճա-
նաչել :

Պ. Յուդային ցոյց տուած նշանովը :

Հ. Յուդան ի՞նչ նշան ցոյց տուած էր նոցա :

Պ. Նշան ցոյց տուած էր, թէ ումը որ
համբուրելու լինի՝ այն է Յիսուսը :

Հ. Յուդա երբ որ Յիսուսին համբուրեց՝
Յիսուս ի՞նչ ասաց նորան :

Պ. Այս խօսքը, «Յուդա՛, դու զիս համ-
բուրելով՝ կը մատնես» :

Հ. Յուդան ի՞ր արած անօրէն գործին հա-
մար չը զղջացաւ :

Պ. Զղջացաւ, ու առած արծաթը տարաւ
քահանայապետներուն ու ծերերուն տուաւ-
ասելով, « ես մեղք գործեցի, որ արդար ա-
րիւնը մատնեցի » :

Հ. Քահանայապետները ի՞նչ սրատասխան
տուին նորան :

Պ. Պուն զիտե՞ս ասացին, այդ մեզ հող չէ՞ :

Հ. Յուդան թողո՞ւ թիւն խնդրե՞ց Յիսու-
սէն :

Պ. Ո՛չ, բոլորովին յուսահատուած՝ ար-
ծաթը տաճարին մէջ ձգելէն յետոյ դնաց ինք-
զինքը կախեց, ու հողւով մարմնով կորաւ :

Հ. Քահանայապետները առանձն այն ար-
ծաթը :

Պ. Առին, բայց որովհետև արևան զին էր՝
արժան չը համարեցան տամարին զանձանա-
կը դնելու, ու նորանով պլտիկ տեղ գնեցին
օտարականներուն գերեզմանոց շինելու հա-
մար:

Հ. Երբ որ Յիսուսին բռնելու եկան աշա-
կերտները ի՞նչ արին:

Պ. Թշնամիներուն հետ կռուիլ ուղեցին,
Պետրոսն էլ Մաղքոսին ականջը սրով զարկաւ
կտրեց:

Հ. Յիսուս այսպիսի վրէժխնդրութեան յօ-
ժարութիւն ունէ՞ր:

Պ. Այ՛, ուստի աշակերտներուն ասաց «տե-
րերը տեղը դրէ՛ք, ես եթէ ուղելու լինիմ՝
երկինքէն տասներկու զունդէն աւելի հրեշ-
տակ իջեցնելու կարող եմ»:

Հ. Մաղքոսը ո՞վ էր:

Պ. Քահանայապետին ծառայն էր:

Հ. Նորա ականջը կորած մնաց:

Պ. Այ՛, վասն զի Յիսուս իսկոյն լաւացուց:

Հ. Յիսուսին բռնեղէն յետոյ՝ ո՞ւր տարան:

Պ. Նախ Աննա քահանայապետին ու յետոյ Կայիափա քահանայապետին մօտը տարան, որ դատուի:

Հ. Յիսուսի աշակերտները ի՞նչ եղան:

Պ. Փախան ցրուեցան, մինակ Պետրոսն ու Յովհաննէսը Յիսուսի ետեւէն գնացին ու Կայիափային տունը մտան:

Հ. Պետրոսին այն ժամանակը ի՞նչ պատահեցաւ:

Պ. Իրան Յիսուսի աշակերտ լինելը երեք անգամ ուրացաւ, ինչպէս որ Յիսուս առաջուց ասած էր:

Հ. Յետոյ Պետրոս չը զղջացա՞ւ:

Պ. Զղջացաւ, ու շատ արտասուք թափեց՝

Հ. Կայիափային տունը ի՞նչքան ժամանակ մնաց Յիսուս:

Պ. Բոլոր դիշերը այնտեղ պահեցին, ու երեսը թքելով ապտակ լսիելով՝ ծաղը առնելով շատ չարչարեցին:

Հ. Առաւօտուն Յիսուսին ո՞ւր տարան :

Պ. Պիղատոսին մօտը :

Հ. Ինչո՞ւ համար :

Պ. Մեռցնելու հրաման առնելու համար :

Հ. Պիղատոս ո՞վ էր :

Պ. Հրէաստանի դատաւոր էր հռովմայեցիներուն կողմէն դրուած :

Հ. Ո՞ր տեղացի էր :

Պ. Պոնդացի :

Հ. Պիղատոս շուտով հրաման տուա՞ւ Յիսուսին մեռցնելու :

Պ. Ո՛չ, քննեց իմացաւ, որ Յիսուս անմեղ է, բայց Հերովդէսի մօտ խրկեց, որ նա էլ քննէ :

Հ. Հերովդէս ի՞նչ արաւ :

Պ. Յիսուսին մի քանի բան հարցուց և ուզեց, որ Յիսուս իր առջիւր հրաշք անէ :

Հ. Յիսուս նո՞ւա կամքը կատարե՞ց :

Հ. Ո՛չ, վասն զի ոչ հրաշք գործեց և ոչ հարցմունքներուն պատասխան տուաւ :

Հ. Ե՞տքը :

Պ. Հերովդէս՝ Յիսուսի լուռ կենալուն վրայ բարկանալով՝ վրան ճերմակ շոր ձգել տուաւ, ու նորէն Պիղատոսի մօտ դրկեց :

Հ. Պիղատոս այն ժամանակը Յիսուսին ազատելու համար հնարքներ չը գործածեց :

Պ. Ետո հնարքներ գործածեց, բայց օգուտ չ'արաւ :

Հ. Ինչո՞ւ համար :

Պ. Նորա համար, որ Յիսուսի թշնամիները շատ կատղած լինելով՝ ասկնքը մէկ բերան կը կանչէին « ի խաչ հան, ՚ի խաչ հան գդա » :

Հ. Երբ որ Պիղատոս այդ խօսքը լսեց ի՞նչ արաւ :

Պ. Բազմոթեան առջևը ջրով ձեռքերը լուաց ու ասաց « ես այդ արդար մարդուն արիւնէն քաւեալ եմ » :

Հ. Հրէաները ի՞նչ պատասխանեցին :

Պ. Պատասխանեցին թէ՛ « արդար արիւնը

մեր վրայ ու մեր զաւակներուն վրայ թող լինի:

Հ. Աւրեմն Պիղատոս հրտման տուա՞ւ Յիսուսին սպանելու:

Պ. Այո՛:

Հ. Ի՞նչպէս սպանեցին Յիսուսին:

Պ. Խաչը հանելով:

Հ. Ա՞ր տեղ:

Պ. Քաղաքէն դուրս՝ Գողգոթա անուած տեղը:

Հ. Յիսուսի խաչը ո՞վ տարաւ գողգոթա:

Պ. Առաջ Յիսուսի կռնակը դրին, յետոյ Սիմոն կիւրենացիին՝¹ տուին, որ նա տանի:

Հ. Ինչո՞ւ համար այդպէս արին:

Պ. Նորա համար, որ վախեցան չը լինի թէ Յիսուս խաչը չը հանուած ճամբան մեռնի:

Հ. Յիսուսի հետ ուրիշ մարդ էլ խաչը հանեցի՞ն:

1. Սիմոն կիւրենացին հրէայ չէր, բայց օտար ազգէ ու պանդուխտ էր, որ այն ժամանակը իր աղաքակէն քաղ: ք կուգար: Մարկոս. Ժե. 21):

Պ. Այո՛, երկու մարդ էլ խաչը հանեցին՝ մէկը Յիսուսի մէկ կողմը և միւսը մէկէլ կողմը:

Հ. Ի՞նչ մարդիկ էին նորանք:

Պ. Երկուքն էլ չարագործ աւազակներ էին, բայց մէկը որ Յիսուսի աջ կողմն էր՝ Աբբայութեան արժանի եղաւ:

Հ. Ի՞նչպէս:

Պ. Երբ որ մէկէլ ընկերը խաչի վրայէն Յիսուսին նախատինք կ'անէր, ինքը յանդիմանեց նորան, ու Յիսուսի Աստուածութեանը հաւատալով, ասաց ՝Տէր, ինչ ժամանակ քո թագաւորութիւնովդ դաս՝ զիս յիշէ: Յիսուս էլ նորան ասաց. « Այսօր իմ հետս արքայութեան մէջ ընկերու ես »:

Հ. Երբ որ Յիսուսին խաչը հանեցին՝ նորա հանդերձքը ի՞նչ արին:

Պ. Զինուորները առին իրանց մէջ բաժնեցին չորս կտոր պատռելով:

Հ. Պատմութեանն էլ պատռեցի՞ն:

Պ. Ո՛չ. պատմութեանը հիւսած ու առանց

կարի լինելուն համար՝ վիճակ ձգեցին :

Հ. Յիսուսի խաչին վրայ ի՞նչ գրուած էր :

Պ Պիղատոս այս խօսքերը գրել տուած էր
 « Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից » :

Հ. Ո՞ր ազգի լեզուաւ կամ գրով :

Պ Եբրայեցերէն, Դաղմատերէն (այսինքն լատիներէն) ու Յունարէն :

Հ. Յիսուս խաչին վրայ եղած ժամանակը՝
 ի՞նչ շարձարանք տուին :

Պ Երբ որ Յիսուս ծարաւի եմ, ասաց,
 ջուրի տեղ լեղիով խառնած քացախ տուին :

Հ. Յիսուս իր հոգին ի՞նչպէս աւանդեց :

Պ Բարձր ձայնով այս խօսքերը ասելով
 « Հայր, հոգիս քու ձեռքդ կ'աւանդեմ » :

Հ. Յիսուս խաչին վրան եղած ժամանակը՝
 մահուան ժամուն ի՞նչ երեւելի նշաններ
 եղան նորա Աստուածութիւնը յայտնելու
 համար :

Պ Արեգակը կարգէ գորս խաւարեցաւ,
 տաճարի վարագոյրը վերէն վայր ինքնիրան պա-

տառեցաւ, աստուած քարերը Ճեղքուեցան,
դերեզմանները բացուեցան ու մեռելները ող-
ջացան :

Հ. Ուրիշ ի՞նչ եղաւ :

Պ. Չինուորներէն մէկը նիզակով Յիսուսի
կողը ծակեց ու մէջէն արիւն ու ջուր վազեց:

Հ. Ի՞նչու համար ասացիր, որ արեգակը
կարգէ դուրս խաւարեցաւ :

Պ. Նորա համար, որ այն ժամանակը լուս-
նի լրու՜մն լինելով՝ արեգական խաւարելուն
ժամանակը չէր ¹:

Հ. Յիսուսի մարմինը քանի՞ ժամ խաչին
վրայ մնաց :

Պ. Ելիք ժամէն աւելի, կամ չորս ժա-
մու չափ ²:

Հ. Յիսուսին ո՞վ խաչէն իջոյց :

1. Արեգական խաւարումը բնականապէս լուսնի ծնըն-
դեան ժամանակը կը պատահի:

2. Յիսուս վեցերորդ ժամուն այսինքն կէսօրի մօտ խա-
չեցաւ, իններորդ ժամուն հողին աւանդեց ու նորանէ
յետոյ թաղուեցաւ:

Պ. Յովսէփ Արեմաթացին ու Նիկողիմոս:

Հ. Սորանք ի՞նչպէս մարդիկ էին:


Պ. Հրէից իշխաններ և Յիսուսի ծածուկ աշակերտներ էին:

Հ. Յիսուսի մարմինը ո՞ւր թաղեցին:

Պ. Յովսէփ Արեմաթացիին պարտեցը, նոր փորած քարէ գերեզմանի մէջ:

Հ. Հրէաները Յիսուսին թաղելէն յետոյ ի՞նչ զգուշութիւն արին:

Պ. Գերեզմանի դրան քարը կնքեցին, ու քովը պահապան զինուորներ դրին. որ չը լինի թէ Յիսուսի մարմինը գողնան:



ՅԱԻԵԼՈՒԱԾՔ

Ա. Հաղորդութեան խորհրդոյ
սահմանումը:

Հ. Յիսուս Բաղարջակերաց ասնին առաջի
իրիկունը ի՞նչ խորհուրդ աւանդեց:

Պ. Հաղորդութեան խորհուրդը, որով իւր մարմինն ու արիւնը աշակերտներուն տուաւ :

Հ. Մարմինը ի՞նչպէս տուաւ :


Պ. Հացը առաւ՝ օրհնեց՝ կտրեց՝ ու աշակերտներուն բաժնեց՝ ասելով «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինս» :

Հ. Արիւնը ի՞նչպէս տուաւ :

Պ. Պաւաթով զինի առաւ՝ օրհնեց՝ ու ասաց «Արբէ՛ք ՚ի սմանէ, ս'յս է իմ արիւնս» :

Հ. Յիսուս աշակերտներուն պատուիրեց, որ նորանք էլ այս խորհուրդը կատարեն :

Պ. Այո՛. «այս արէ՛ք զիս յիշելու համար, ասաց :



Բ. Ունելուայ :

Հ. Յիսուս հաղորդութեան խորհուրդը աւանդելէն առաջ՝ ի՞նչ առաքինութեան օրինակ ցոյց տուաւ :

Պ. Խոնարհութեան :

Հ. Ի՞նչպէս :

Պ. Ձրով լեցուն կոնքի (լազեանի) մէջ՝
աշակերաններուն տոբերը լուսով :

Հ. Լուանալէն ետքը ի՞նչ պատուէր տուաւ :

Պ. Ինչպէս որ ես ձեզի արի, այնպէս էլ
դուք իրարու արէք սասց :



ՔԼՈՒԽ ՎԵՅԵՐՐԳ

Քրիստոսի Յարութիւնը :

Հ. Յիսուս ե՞րբ յարութիւն առաւ :

Պ. Մահուան երրորդ օրը, այսինքն շա-
բաթ դիշերը՝ դէպ ՚ի Լոյս կիւրակէի :

Հ. Պերեզմանի պահապանները ի՞նչ եղան :

Պ. Այնպէս վախեցան՝ սարսափեցան, որ
ձեռելի պէս դետնի վրայ փռուեցան :

Հ. Ո՞վ վախցուց նորանց :

Պ. Հրեշտակը, որ յանկարծ ահաւոր լուսափայլութեամբ երկինքէն իջաւ, գերեզմանի դրան քարը գլորեց ու վրան նստաւ :

Հ. Յիսուսի յարութեան համբաւը շուտ տարածուեցաւ :

Պ Ս յո՛. ինչու որ պահապաններուն մէկ քանին վազեցին, քաղաքը վնասցին ու քահանայապետներուն պատմեցին :

Հ. Քահանայապետները այդ բանը որ լսեցին ի՞նչ արին :


Պ Յիսուսի յարութիւնը սուտ կարծեցնելու համար՝ պահապաններուն փող տուին, որ ասէն՝ Յիսուսի աշակերտները գիշերը եկան մարկոսը գողցան երբոր մինք քնած էինք :

Հ. Յիսուս յարութիւն առնելէն յետոյ՝ ու՛մ երևեցաւ :

Պ Առաջ՝ Մարիամ Մագդաղենացիին, յետոյ՝ ուրիշներուն, և շատ անգամ էլ իր աշակերտներուն՝ մինչև քառասուն օր :

Հ. Աշակերտներուն ի՞նչ պատուէր տուաւ :

Պ. Պատուիրեց, որ երթան բոլոր աշխարհ
 Աւետարանը քարոզեն ու հաւատացողները
 միրտեն յանուն Հօր և Նրդւոյ և Հոգւոյն
 սրբոյ :



ԳԼՈՒԽ ԵՅԹՆԵՐՆՐԴ

Քրիստոսի Համբարձումը :

Հ. Յիսուս երբ համբարձաւ :

Պ. Իւր յարութիւնէն յետոյ՝ քառաս
 ներորդ օրը :

Հ. Ո՞ր տեղէն համբարձաւ :

համար՝ Հոգին սուրբը զրկելու խօսք տուաւ:

Հ. Յիսուսի համբարձումը ի՞նչպէս եղաւ:

Պ Յիսուս իր աշակերտները առաւ՝ ձիթենեաց լէռը տարաւ. ու այն տեղ նորանց օրհնելէն յետոյ՝ երկինքը ելաւ, և ամպերուն մէջէն անյնեւով՝ աներևայթ եղաւ:

Հ. Ուրիշ ի՞նչ տեսիլք եղաւ այնտեղ:

Պ. Երբ որ աշակերտները աչքերը տընկած դէպ ՚ի երկինքը կը նայէին, երկու հրեշտակ երեւեցան նոցա մարդու կերպարանքով ճերմակ զգեստ հագած:

Հ. Այն հրեշտակները աշակերտներուն բանասիրն:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. Քրիստոսի լճնական խօսքերը
ու պատասխանները :

Հ. Երբոր Հրէաները Յիսուսին բամբաստեցին՝ Մատթէոս մաքսաւորի տունը կերակուր ուտելուն համար Յիսուս ի՞նչ ասաց :

Պ. «Առողջ մարդերուն՝ բժիշկ հարկաւոր է, հապա հիւանդներուն հարկաւոր է, ասաց: Այնպէս էլ ես եկած եմ՝ ոչ թէ արդարները՝ հապա մեղաւորները կանչելու համար» :

Հ. Երբոր Հրէաները հարցուցին Յիսուսին թէ՛ շաբաթ օրը բժշկութիւն գործել արժան է, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ :

Պ. «Եթէ ձեր ոչխարը լիոսի մէջ ընկած լինի՝ շաբաթ շաբաթ զուրս չէ՞ք հաներ, ասաց: Եթէ այդ արժան է, մարդ բժշկելն էլ արժան է » :

Հ. Երբոր Յովհաննէս Մկրտիչին հրամանաւը՝ նորա աշակերտներէն երկուքը եկան Յիսուսին հարցուցին թէ՛ : զո՞ւ ես Մեսիայն, թէ՛ ուրիշի սպասեմք, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ :

Պ. «Պնացէ՛ք՝ ասաց, աստու Թե՛ցէ՛ք Յովհաննէսին ինչ որ լսեցիք ու տեսաք, ահա՛ կոյրերը կը տեսնան, կաղերը կը քայլեն, բորոտները կը սրբուին, խուլերը կը լսեն, մեռելները կը կենդանանան և այլն :

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները նորան հարցուցին թէ՛ ի՞նչ է պատճառը, որ մենք քու բժշկած դիւահարները չը կարողացանք բժշկել : Յիսուս ի՞նչ ասաց :

Պ. «Պորա պատճառը ձեր թերահաւատութիւնն է՝ ասաց, «եթէ մանանեխի (հարտալի) հատի չափ հաւատք ունենաք ու լեռան ասէ՛ք՝ տեղէդ վեր կաց, կը վերկենայ, և ձեզ համար մէկ բան անկարելի չը լինի :

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները ուզեցին

գիտունալ թէ արքայութեան մէջ իրանց մէջէն ո՞վ մեծ լինելու է, Յիսուս ի՞նչ ասաց :

Պ. Պղտիկ մէկ տղայ կանչելով՝ նոցա ցոյց տուաւ ու ասաց, « Եթէ դուք այս տղայիս պէս խոնարհ ու անմեղ չըլինիք, արքայութիւն չէք կարող մտնել. ո՞վ որ սորա պէս ինքնիրան կը խոնարհացնէ՝ այն է մեծ արքայութեան մէջ » :

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները մանր տղայոց չէին թողուր Յիսուսին մօտենան, որ նեղութիւն չը տան, Յիսուս ի՞նչ ասաց :

Պ. Թող տուէք որ դան, արքայութիւնը այդպիսիներունն է» ասաց, ու տղայքը գիրկը առնելով՝ օրհնեց :

Հ. Երբոր Հրէաները տաճարի սրահին մէջ Յիսուսին ասացին « Եթէ դու ես Մեսիայն, յայտնէ մեզի » : Յիսուս ի՞նչ ասաց :

Պ. « Ես յայտնած եմ » ասաց « ու իմ գործքերս կը վկայեն, որ ես Որդի Աստուծոյ եմ. բայց դուք չէք ուզեր հաւատալ, ին-

չու որ խմ օչխարներէս չէք ։

Հ. Երբոր մէկ հարուստ երիտասարդ հարցուց Յիսուսին՝ թէ արքայութիւն երթալու համար ի՞նչ պէտք է գործել, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ ։

Պ. «Ատուծոյ պատուիրանքը սլահէ, առաց ։ Եւ այց երբոր երիտասարդը յայտնեց՝ թէ տղայութեան ատենէն միշտ պատուիրանս սլահ կըած է, Յիսուս նորան այս խրատն էլ տուաւ ։ «Եթէ կատաղեալ լինիլ կ'ուզես՝ բոլոր հարստութիւնդ աղքատներուն տուր ու ետեւէս արի» ։ Այս խօսքը երիտասարդին շատ ծանր երեւցաւ, նորա համար գլուխը կախելով՝ գնաց ։ Այն ժամանակը Յիսուս ասաց ։ «Աւելի հեշտ է հաստ չուանին ասեղի ծակէն անցնելը, քան թէ հարուստ մարդու արքայութիւն մանելը» ։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները զարմացան՝ նորա անիծած թղենիին շուտով չորնալուն համար, Յիսուս նորանց ի՞նչ ասաց ։

Պ. «Դուք էլ, ասաց, եթէ հաւատք ունենաք ու չի երկմտիք, ամեն բան կարող էք անել. եթէ լեռանդ ասէք՝ վեր կաց ծովը ընկիր, կ'ընկնի »:

Հ. Երբոր քահանայապետներն ու դպիրները Յիսուսին հարցուցին թէ դու ո՞ր իշխանութիւնով կը քարոզես ու կը սորվեցնես, կամ թէ ո՞վ տուաւ քեզ այդ իշխանութիւնը, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ:

Պ. «Ես էլ ձեզ մէկ բան հարցնեմ՝ ասաց, և դուք պատասխան տուէք. Յովհաննէս Մկրտչի մարդ մկրտելը Աստուծո՞ւ է թէ մարդոցմէ: Եւ որովհետեւ նորանք այս բանիս վրայ մտածելէն, յետոյ « չենք գիտեր: ասացին, Յիսուս էլ նորանց պապանձեցուց հետեւեալ պատասխանով. ուրեմն ես էր ձեզ չե՞ր ասեր թէ ո՞ր իշխանութիւնով այս բանը կ'անեմ »:

Հ. Երբոր Փարիսեցիներն ու Սադուկեցիները շարամտութեամբ հարցուցին Յիսուսին՝

Թէ Հռովմայեցւոց կայսեր հարկ տալ պէտք է Թէ ո՛չ, Յիսուս ի՞նչ պատասխանեց :

Պ. Մէկ դահեկան բերել տուաւ ու հարցուց . Սորա վրայ եղած պատկերը կամ գիրը ո՛ւմն է » . Երբոր ասացին . կայսերն է , զնայէ՛ք ուրեմն, ասաց, կայսերը կայսեր տուէ՛ք ու Աստուծոյնը՝ Աստուծոյ» :

Հ. Երբոր Յիսուս անսաւ Թէ մէկ այրի կնիկ տաճարի դանձանակի մէջ երկու լուծայ ձգեց, նորա համար ի՞նչ ասաց :

Պ. «Այս կնիկը» ասաց ամեն տտակ ձրգողներէն աւելի ձգեց, ինչու որ նորանք իրանց հարատու թիւններուն աւելորդը ձգեցին, բայց սա բոլոր ունեցածը ձգեց » :

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները տաճարին դեղեցիկ քարերուն ու շինութեանը վրայ կը զարմանային, Յիսուս ի՞նչ ասաց նոցա :

Պ. «Մէկ Ժ. մանտկ զալու է » ասաց , որ այդտեղ քար քարի վրայ չը պիտի մնայ » :

Հ. Երբոր Պետրոս Յիսուսին Արդի Աստու-

Տոյ դաւանեց, Յիսուս ի՞նչ ասաց նորան :

Պ. « Երանի քեզ » ասաց, Սիմոն որդի Յովնանու, ինչու որ մարմինն ու արիւնը չը յայտնեց քեզ այդ բանը, հասկա իմ՝ Հայրը՝ որ երկինքն է. դու վէ՛մ ես, ու ես այդ վիճի վրայ շինելու եմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները վայն յաղթահարել կարող լինելու չեն » :

Հ. Երբոր կայխափա քահանայապետը հարցուց Յիսուսին թէ՞ դու Աստուծոյ որդի՞ ես, Յիսուս ի՞նչ պատասխանեց :


Պ. « Դուն ասացիր, ասաց, ու վերջին դատաստանին օրը իմ փառքս տեսնելու էք » :

Հ. Երբոր փարիսեցիներն ու դպիրները Յիսուսին հարցուցին, թէ՞ ինչո՞ւ համար քու աշակերտները չը լուսացուած ձեռքերով հաց կ'ուտեն, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ :

Պ. « Անլուայ ձեռքով հաց ուտելը » ասաց, չի պղծեր, բայց սրտի մէջ եղած շար խորհուրդները կը պղծեն » :

Հ. Երբոր Յիսուսի՝ աշակերտները հարցուցին՝ թէ իւր երկրորդ անգամ գայը կամ աշխարհիս վերջը ե՞րբ պիտի լինի, Յիսուս նոցա ի՞նչ ասաց:

Պ. Չեղի հարկաւոր չէ՞ ասաց այդ բանը գիտենալ, որ Հայր Աստուծոյ կամքէն կախուած է, բայց այն ժամանակ պիտի լինի, երբ որ ամենեւին մէկը չի կարծեր:



Բ. Քրիստոսի ասած առակները:

Հ. Ի՞նչպէս է երկու պարտապաններուն առակը, զոր Յիսուս խօսեցաւ:

Պ. Երկու հողի մէկ մարդու պարտական էին. մէկը հինգ հարիւր դահեկան պարտքունէր, ու միւրը յիսուն: Առնելիքի տէրը երկուքին պարտքն էլ բաշխեց: Այս երկու պարտապաններուն ո՞րը պէտք է աւելի սիրէ անելիքի տիրոջը: Յայտնի է թէ՛ նա՝ որի պարտքը աւելի էր: (Ղուկաս, և. 41—43.)

Հ. Յիսուս ինչո՞ւ համար այս առակը խօսեցաւ :

Պ. Հասկացնելու համար՝ թէ շատ մեղքի տէր մարդն էլ թողու-թիւն կը գաննէ, թէ որ Աստուծոյն մեծ սէր ու ջերմեռանդու-թիւն ունենայ :

Հ. Երկրագործի առակը ի՞նչպէս խօսեցաւ Յիսուս :

Պ. Երկրագործին մէկը սերմ կը ցանէր. սերմերէն որը ճամբու վրայ ընկնելով՝ թըռչունները կերան, որը քարոտ տեղ ընկաւ ու արմատ չը բռնեց՝ չորցաւ, որն էլ փուշերուն միջը մնալով՝ խեղդուեցաւ. բայց լաւ որ փափուկ հողոյ վրայ ընկածները ծլեցան ու պտղաբեր եղան, մէկ հատի տեղ երեսուն, վաթսուն մինչև հարիւր հատ տուին :

Հ. Յիսուս այս առակը բացատրե՞ց :

Պ. Այո՛. սերմերը՝ Աստուծոյ պատուիրանքն են. զեռինը՝ մարդերուն սրտերն են : Անհաւատ՝ թուլահաւատ՝ աշխարհասէր՝ ու

փաստանէր մարդերը առաքինութիւնն չեն կարող գործել: Բայց բարի և ջերմեռանդ սիրտ ունեցողները Աստուծոյ պատուիրանքը ուրախութեամբ մտիկ անելով, համբերութիւնով շատ առաքինական պտուղներ կրտսնն:

Հ. Անգութ ծառային առակը ի նչպէս է:

Պ. Մէկ թագաւոր խնացաւ, որ իր ծառաներէն մէկը իրան տասն հազար քանքար պարտք ունի, ու հրամայեց որ անով սեղով ծախեն յիշեալ ծառայն ու պարտքը վճարել տան: Ծառայն թագաւորի ոտքը ընկաւ, ու աղաչեց, որ իրան ժամանակ տայ պարտքը հատուցանելու: Թագաւորն էլ խղճալով՝ բոլոր առնելքը բաշխեց: Նոյն ծառայն մէկ ուրիշ մարդից հարկւր դահեկան առնելք ունէր, պարտապանը աղաչեց, որ քիչ համբերէ ու առնելքը չը պահանջէ: Բայց ծառայն մտիկ չ'արաւ ու բռնեց պարտականին բանաը դրաւ: Ծառային ընկերները խեղճին վրայ ցաւելով պնացին այս անգթութիւնը թագաւորին յայտ-

'ներջին : Թագաւոր : Ճառային կանչեց ու ա-
սաց : Ճառայ չարու ևս քու աղաչանքիդ հա-
մար տանն հազար քանքարի պարտքդ չը պա-
հանջեցի, պէտք չէր որ դուն էլ հարիւր դա-
հեկան առնելիքդ չըպահանջէիր : Յետոյ հը-
րամայեց որ ճառային բանտը գննն մինչև որ
բոլոր պարտքը վճարէ : (Մատ. ԺԸ 23—34) :

Հ Յիսուս այս առակով ինչ ուզեց յայտ-
նել :

Պ. Իմացանել ուզեց՝ որ Աստուած էլ մեր
մեղքերը չի ների, եթէ մենք իրարու յան-
ցանքը չը ներենք :

Հ. Մամարացիին առակը Յիսուս ինչպէս
խօսեցաւ :

Պ. Մարդուն մէկը երուտաղէմէն երիքով
երթալու ժամանակը՝ աւազակներու հանդի-
պելով վիրաւորուեցաւ, ու ճամբուն վրայ կի-
սամեռ ընկաւ : Այնտեղէն առաջ մէկ քա-
հանայ անցաւ, յետոյ մի Ղևաացի, երկուքն
էլ վիրաւորեալը տեսան, բայց առանց օգնե-

լու թողին գնացին. վերջը մի Սամարացի եկաւ,
 քետինը ընկած վիրաւորուածին վեր առաւ,
 վէրքը կապեց, ձիուն վրայ դրաւ ու մինչև
 պանդոկը տարաւ հասուց. սրանդոկապետին էլ
 երկու դահեկան տուաւ, ոչ վիրաւորուածին
 դարմանելու հող տանի ու ասաց «եթէ աւելի
 ծախք հարկաւորելու լինի, դուն արան ու ես
 նորէն տեղս դառնալու ժամանակը քեզ կը
 վճարեմ» . (Ղու. Ժ. 29-35):

2. Յիսուս այս առակը պատմելով՝ ի՞նչ
 խնայնել ուզեց :

Պ. Հասկացնել ուզեց թէ մարդիկ պար-
 ան մարդասէր լինելի, ու ցաւակցաբար ընկե-
 րին օգնել և բարեգործութիւն անելու կա-
 բողութիւն տնկցող մարդը՝ եթէ ձեռքէն
 եկած բարի գործը անել չ'ուզէ՝ մեղք կը
 գործէ :

2. Հարիւր ոչխարներուն առակը ի՞նչ
 պէս պատմեց Յիսուս :

Պ. Եթէ մի մարդ հարիւր ոչխար ունե-

նայ, սե ոչխարներէն մէկը մոլորի, չէ՞ որ
 իննսուն ու ինը ոչխարը լեռերուն վրայ կը
 թողու ու կ'երթայ մէկ մոլորեալը փնտռելու,
 և եթէ գտնելու լինի՝ այն մէկ հատին վրայ
 աւելի ուրախ կը լինի, քան թէ իննսուն ու
 իննին : (Մատթ. ԺԸ. 12, 13) .

Հ. Այս առակով ի՞նչ հասկացնել՝ ու-
 ղեց Յիսուս :

Պ. Ինքը աշխարհ եկած է, որ մեղքով
 մոլորուած կորած մարդերուն դարձնէ և Հօբ
 Աստուծոյ կամքը այն է, որ ամենեւին մի
 մարդ չը կորչի, ու եթէ մէկ մեղաւոր դար-
 ձի գայ ու մեղքերէն ազատուի՝ Աստուած
 ուրախ կը լինի :

Հ. Անառակ որդւոյն առակը ի՞նչպէս
 պատմեց Յիսուս :

Պ. Մի մարդ երկու որդի ունէր : Պատիկ
 որդին հօրմէն իւր ժառանգութեան բաժինը
 խնդրեց՝ առաւ, ու մի հեռու քաղաք եր-
 թալով՝ այնպէս անառակ կեանք վարեց, որ

բողոր ունեցածը փչացուց. ուստի գնաց ու ըիշ մարդու քով խոսարած եղաւ, բայց այնքան ողորմելի էր որ՝ խոսերու կերած այծեղ ջիւրին էլ կարօտ կը մնար : Այսպէս՝ խեղճութեանը մէջ միտքը բերեց իր հօրը ծառաները, որոնք հանգիստ կեանք կը վարեն ու բանի մի կարօտութիւն չունին : Երբ չի կտրեց, ելաւ նորէն հօրը տունը դարձաւ՝ աղաչելու համար, որ զինքը իբրև ծառայ ընդունի : Հայրը հեռուէն որդին տեսնելուն պէս, վազեց եկաւ առաջը ու վիզը փաթթուեցաւ : Որդին ամաչելով ասաց : Մեղայի, հայր, քու զուակդ լինելու արժանի չեմ, ծոռայի տեղ ընդունէ զիս » : Հայրը աւելի գթալով՝ նորան ասնիւ շոր հագցուց, գերացած եղը մորթել տուաւ, և ուրախութեան սեղան պատրաստեց՝ կորուած տղան գտնելուն համար : Այն միջոցը մեծ տղայն էլ ազարակէն դարձաւ՝ տունը եկաւ, բայց ուրախանալու տեղը՝ տրանջալ, բարկանալ սկսաւ ու հօրը ասաց

Վ. յաչափ ժամանակ է որ քեզի հնազանդ եմ
 եղած ու դուն ինձի մի ուլ անդամ չես տը-
 ւած : բայց հիմա այս որդւոյդ համար՝ որ
 անառակութեամբ քու ստացուածքդ փշա-
 ցուց, գիրացուցած եզը մորթել տուիր : Հայրը
 պատասխան տուաւ Որդեակս. իմ ամեն ու-
 նեցածներս քունն են. բայց այս զաւակս կո-
 րած էր՝ ու գանուեցաւ. նորա համար ու-
 բախանալ պէտք է : (Ղուկ. ՓՅ. 11—30) :

Հ. Յիսուս ինչո՞ւ համար այս առակը ա-
 սաց :

Պ. Յոյց տալու համար՝ թէ Աստուած այն-
 պէս ողորմած է, որ մեզաւորին կորչելը չ'ու-
 գեր, հասկա նորա դարձի զալը կ'ուզէ, սրտով
 զղջացող մեզաւորին յանցանքը կը ներէ :

Հ. Տնտեսի առակը զիտե՞ս :

Պ. Այո՛. մի հարուստ մարդ լսելով, որ
 իրեն տնտեսը աւելորդ ծախքեր արած է, ու-
 զեց որ իւր սաշտոնէն հանէ : Տնտեսը մտա-
 ծեց, որ յետոյ ապրուստի կարօտ մնալու է,

իրան տիրոջը սրարտականներուն կանչեց ու նո-
ցա սրարտքերուն մէմկ մասը պահսեցուց :
Տէրը երբ որ լսեց, նորա այսպիսի խեղացութիւ-
նը, գովեց նորան : (Ղ^ա Կ. Ժ. 2. 1—8) :

Հ. Յիսուս այս առակով ի՞նչ հասկացնել
ուզեց :

Պ. Հասկացնել ուզեց, թէ մենք էլ պէտք
ենք դրամով և մարմնաւոր ողորմութիւննե-
րով աղքատներուն շահել, և թէ՛ կարելի չէ
Աստուծոյ ու մամոնայի (փողի) ծառայել :

Հ. Մեծատունի ու Ղազարոսի առակը
ի՞նչպէս է :

Պ. Մի մեծատուն մարդ փառաւոր զգեստ-
ներով զարդարուած՝ ամեն օր ուտելով խմե-
լով ուրախութեան մէջ էր, Նորա դրան մօտն
էլ աղքատ Ղազարոսը կը նստէր, այնչափ
ողորմի լի՝ որ մեծատունի սեղանէն ընկած
հացի փշրանքներուն կարօտ էր, ու շը-
ները նորա վէրքերը կը լիպէին, երբ երկու-
քն էլ մեռան մեծատունը դժոխքին մեջէն

տեսաւ որ Ղազարոսը արքայութեան մէջ հայր
Աբրահամին զիրկը նստած էր, սկսաւ կանչել
«հայր Աբրահամ, ողորմի՛ր ինձի, զրկէ Ղա-
զարոսը՝ որ իր մատին ծայրը ջրով թրջէ, ու
իմ չորցած ցամքած լեզուս զովայցնէ »: Այդ
բանը անկարելի է, ասաց Աբրահամ, քու կե-
նացդ մէջ ունեցած վայելմունքդ ու Ղազար-
ոսին քաշած չարչարանքը միտքդ բեր : Մե-
ծատունը նորէն աղաղակեց «հայր, կ'աղայնմ
քեզի, գոնէ այդ մարդը զրկէ հօրս տունը,
որ երթայ եղբայրներուս իմաց անէ չը լինի թէ
նորանք էլ այս տանջանքի տեղը գան »: Աբ-
րահամ պատասխան տուաւ «նորանք ունին
Մովսէսի և ուրիշ մարդարէներու գրքերը,
թող կարդան ու հասկանան »: Ա՛յ, այդպէս
չի լինիր, ասաց մեծատունը, պէտք է մեռել-
ներէն մէկը երթայ նոցա քարոզէ՛, որ ապաշ-
խարհն : Բայց հայր Աբրահամը նորա յոյսը
կորեց այս վերջին խօսքով «Եթէ եղբայրներդ
մարդարէներուն գրած խրատներուն մօտիկ չեն

աներ, յայտնի է որ մեռելներէն մէկն էլ եր-
թայ՝ մտիկ անելու չեն»։ (Ղուկաս. ԺԶ. 19—31)։

Հ. Այս առակով ի՞նչ ուզեց յայտնել
Յիսուս :

Պ Պէտք չէ որ մարդ իր յոյսը բոլորովին
այս աշխարհքի մարմնաւոր վայելչութիւն-
ներուն և փառքին վրայ հաստատէ, հասկա-
սուրբ գրքերուն միտ դնէ ու հանդերձեալ աշ-
խարհքը մտքէն չի հանէ :

Հ. Դատաւորի առակը ի՞նչպէս է :

Պ Մի քաղաքի դատաւոր ոչ Աստուծակ
կը վախենար և ոչ մարդոցմէ կ'ամաչէր. մի այ-
րի կնիկ էլ ամեն օր նորա մօտ կուգար ու
կ'աղաչէր որ իր դատաստանը կտրէ : Շատ
Ժամանակ դատաւորը այդ կնկան գործին հոգ
չը տարաւ. բայց կնիկը այնչափ գնաց եկաւ ու
աղաչեց, որ դատաւորը ձանձրանալով՝ սկսաւ
ինքնիրան ասել, «Թէպէտ Աստուծակ վախ
չ'ունիմ ու մարդոցմէ չեմ ամաչնար, բայց
նա կնկան դատաստանը վերջացնեմ, որ ձեռ-

քէն ազատիմ : (Ղուկ. ԺԸ. 1—5) :

Հ. Յիսուս այս առակով ի՞նչ խնացնել ուզեց :

Պ. Հասկացնել ուզեց, որ շատ՝ հարկաւոր է մեզի սմեն ժամանակ Աստուծոյն աղօթք անել : որպէս զի Աստուած էլ մեզի ողորմի, ու մեր անդադար աղաչանքը լսէ : Երբոր Աստուծակէ չը վախեցող ու մարդոցմէ չ'ամաչող դատաւորը շատ աղաչանքի չի դիմանար, հասկա Աստուած՝ որ ողորմած է և բարի՝ որչափ առելի դուժ ունի իր ստեղծուածներուն վրայ ու նոցա աղաչանքին կը լսէ :

Հ. Փարիսեցիին ու Մաքսաւորին առակը ի՞նչպէս է :

Պ. Փարիսեցին ու մաքսաւորը տաճարը դնացին : Փարիսեցին սկսեց աղօթելու ու ասաց : Աստուած իմ, փառք քեզ, ու յիշ մարդոց կամ այս մաքսաւորին պէս անիրաւ ու յափշտակող չեմ. շարաթը երկու անգամ պահք կը պահեմ, ու իմ ունեցածներուս

տասանորդը կ'ուտամ : Բայց Մաքսաւորը ինք-
զինքը մեղաւոր ճանաչելով, աչքը անդամ չէր
ուղեր դէպ 'ի վեր բարձրացնել, ու կուրծքին
տալով կ'անէր : « Աստուած մեղաւորիս ողոր-
մի՛ր ու մեղքերուս թողու թիւն տուր : Աս-
տուծոյ առաջև Մաքսաւորը Փարիսեցիէն ա-
ւելի արդար համարուեցաւ : (Ղուկաս. ԺԸ-
9—14) :

Հ. Յիսուս այս առակով ի՞նչ յայտնել
ուզեց :

Պ. Մեղաւոր մարդը եթէ խոնարհ սրտով
«մեղայ» ասէ ու Աստուծակէ թողու թիւն խըն-
դրէ. հաճելի կը լինի, բայց արդարը եթէ
ամբարտաւանու թեամբ պարծենայ՝ կը դատա-
պարտուի :

Հ. Տանուտէրին ու մշակներուն առակը
գիտե՞ս :

Պ. Աի տանուտէր առաւօտը վեր կացաւ,
մշակներ բռնեց մէմէկ դահեկան վարձքով ու
իւր այգին շրկեց. յետոյ ժամը երեքին, վե-

ցին ու իննին ուրիշ սրսբասայ մարդիկ էլ գը-
 տաւ հետոցհետէ, այդին զրկեց՝ ասելով՝ գը-
 նացէ՛ք աշխատեցէ՛ք, ու ինչ որ, արժան է
 ձեր վարձքը կ'ուտամ : Երեկոյին երբոր ամեն
 մշակները այդիէն դարձան, Տանուտէրը իւր
 տնտեսին հրաձայեց, որ ամեն մէկին մէմէկ
 դահեկան տայ, Ս'իզէն վարձուած մշակները
 այս բանը տեսնելով սիտան տրտնջալ ու ա-
 սել, Սենք առաւօտից մինչև իրիկուն աշ-
 խատեցանք ու ինչու համար մէկ ժամ աշ-
 խատող մշակներն էլ մեզի շտի վարձք կ'առ-
 նեն : Տանուտէրը դարձաւ այն տրտնջողնե-
 քէն մէկի կողմը ու ասաց ընկեր, քեզի ի՞նչ
 վնաս կայ, չէ՞ որ քեզի մէկ դահեկան վարձք
 խոստացած եմ, առ քու դահեկանդ ու գնա՛-
 մի՛թէ ես իրաւունք չ'ունիմ որ ումն ինչ
 ուզեմ՝ իմ քսակէս տամ : (Մատ. Ի. 1—15) :

Հ. Յիսուս այդ առակը ասելով՝ ինչ ու-
 ջեց հասկացնելու :

Գ. Եստ մարդիկ թէպէտ ուշ, բայց սր-

տով շատ ջերմեռանդ ու Աստուծոյ մօտ լինելով՝ մեծ շնորհքներու արժանի կը լինին, որովհետև կանչուածները շատ են ու ընտրուածները քիչ :

Հ. Քանքարը շահեցնող ծառաներուն ու քանքարը պահող ծառաներուն առակը ի՞նչ պէս է :

Պ. Մի այնուական մարդ հեռու երկիր երթալու պատրաստուած լինելով, իր ծառաներուն կանչեց ու ամեն մէկին առանձին առանձին փող բաժնեց, մէկին հինգ, մէկին երկու և մէկին մէկ քանքար տուաւ, ու պատուիրեց, որ մինչև իրան դառնալը այն փողը շահեցնեն : Այնուականը ճամբորդութենէն երբ դարձաւ, ծառաներին կանչեց ու խմանալ ուզեց, թէ ամեն մէկը իր առածը որչափ է շահեցուցեր : Հինգ քանքար առնողը հինգ էլ շահ մօտ բերեց, երկու առնողը երկու էլ վաստակ ցոյց տուեց, ուստի երկու ծառայն էլ գոլութիւն առին ու պատիւ տե-

յու թեան մէջ միայն առաքինութիւններով
զարդարուած հոգին տեղ ունի :

Զ. Տասը կուսանաց առակը ի՞նչպէս է :

Պ. Տասը կուսանք կային, հինգը յիմար
ու հինգը իմաստուն : Սորանք ձեռներնին
լապտեր բռնած՝ հարս ու փեսայի առաջը
դուրս գնացին : Իմաստուն կուսանքը ուրիշ
ամաններով էլ ձէթ առած էին իրանց հետ,
իսկ յիմարները առած չէին : Փեսայի գալը
ուշացաւ, ու սմենքն քնեցան : Ա՛յ, գիշերին
ձայն եկաւ, թէ « վերկացէ՛ք, ահա՛ փեսայն
կու գայ » : Ամենքը էլ ելան ու լապտերնե-
րը պատրաստեցին : Եւ որովհետեւ յիմար
կոյսերուն լապտերները հանգչելու մօտ էին,
իմաստուններէն ձէթ ուղեցին, բայց նոքա չը
տուին ասելով « կարելի է թէ մեզի էլ չի
բաւականանայ, գնացէ՛ք ծախողներէն գը-
նեցէ՛ք » : Յիմարները գնացին, փեսայն էլ
եկաւ, իմաստունները պատրաստ լինելով՝
փեսային հետ հարսնիք մտան ու գու-

աբ փակուեցաւ : Յետոյ յիմարները եկան՝
սկսեցին Փնային աղաչել, որ դուռը բա-
նայ : Բայց Փնայն չըբայ արաւ, ասելով
«Իս ձեզ չեմ ճանաչիր» : (Մատ. ԻԵ. 1—12) :

Հ. Յիսուս այդ առակով ի՞նչ հասկաց-
նել ուզեց :

Պ. Հարկէ մեզ, որ մեր հոգիներու փրո-
չութեանը համար հոգալու գործերնիս ան-
հոգութիւնով օրէ օր ետ չը ձգենք, հասցա՛
միշտ արթուն ու սլափափա լինինք իմաս-
տուն կուսանաց պէս, որ անմահ Փնային
առագաստէն (այսինքն Քրիստոսի առագաս-
տէն՝ արքայութենէն) չը զտուինք :

Ք. Քրիստոսի կենարար վարդապետութիւններէն
այբօրենի կարքով Քաղուածոյք:

Ամենայն թագաւորութիւն բաժանեալ
յանձն իւր՝ աւերի. և ամենայն քաղաք
կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ո՛չ կ'ացցէ:

Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բա-
րի, հատանի և 'ի հուր արկանի.

Ամենայն մեղք և հայհոյութիւնք թող-
ցին մարդկան. բայց զՀոգւոյն հայհոյու-
թիւն մի՛ թողցի... մի՛ յայսմ աշխարհի
և մի՛ 'ի հանդերձելումն:

Ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայէ մեղաց:

Ամենայն որ արտաքուստ 'ի ներքս մը-
տանէ 'ի մարդ, ո՛չ կարէ զնա պղծել. զի
ո՛չ եթէ 'ի սիրա նորա մտանէ, այլ յորո-
վայն և արտաքս ելանէ:

Ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս
և ո՛չ գայ առ լոյսն՝ զի մի՛ յանդիմանեա-
ցին գործք նորա. իսկ որ առնէ զճմար-
տութիւն՝ դայ առ լոյսն զի յայտնի լիցին

գործք նորա թէ Աստուծով գործեցան :

Ամենայն տունկ՝ զոր ոչ անկեաց Հայր
Իմ երկնաւոր, խլեացի :

Այս է պատուէր Իմ, զի սիրեաջիք ըզ-
միմեանս :

Անլուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ ըզմարդ :

Անհնարինք առ 'ի մարդկանէ՝ հնարա-
ւորք են յԱստուծոյ :

Անձուկ է դուռն և նեղ ճանապարհն,
որ տանի 'ի կեանս :

Առանց Իմ ոչ ինչ կարէք առնել :

Առաջնորդք կոյրք, որ ըզմժողուկս քա-
մէք և զուղտս կլանէք :

Արարէ՛ք ձեզ քսակս առանց հնանալոյ,
դանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող մեր-
ձենայ՝ և ոչ ցեց ապականէ :

Բազու՛մ են կոչեցեալք, և սակաւ են
ընտրեալք :

Բարի արարէ՛ք ատելեաց ձերոց :

Բարւոք է աղ . եթէ այն անհամեացի .

ի՞նչ համեմեացի :

Քանի՞նչ է՞ք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ
ցեց և ոչ ուտի՞ծ ապականեն, և ոչ գողք
ական հատանեն և գողանան :

Քինի նոր՝ ՚ի տիկս նորս արկանելի է :

Քժուարաւ մտցէ մեծատունն յարքա-
յութիւն երկնից :

Քիւրին է մալխոյ ընդ ծակ ասխան ան-
ցանել, քան մեծատան յարքայութիւն Աս-
տուծոյ մտանել :

Քուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք
զոր են պատուիրեմ ձեզ :

Եթէ թողուցուք մարդկան զյանցանս
նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր :
Ապա թէ ոչ թողուցուք մարդկան՝ զյան-
ցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ
զյանցանս ձեր :

Եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրև զման-
կտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից :

Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մա-

նանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց
 աստի անդր, և փոխեսցի. և ոչ ինչ ուն-
 Տնարին լիցի ձեզ :

Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մա-
 նանխոյ, և ասիցէք թթենւոյ, այսմիկ՝ խը-
 լեաց և անլեաց ՚ի ծովու, և հնազանդես-
 ցի ձեզ :

Եթէ ոք զբանն իմ պահեսցէ, զմահ
 մի տեսցէ ՚ի յաւիտեան :

Եթէ ոք կամիցի զկնի իմ գալ, ուրաս-
 ցի զանձն, և առցէ զխաչ իւր և եկեսցէ
 զկնի իմ :

Եթէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ :

Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պա-
 հեսցիք :

Եղերուք այսուհետեւ խորագէտք իբրև
 զօձս, և միամիտք իբրև զազաւնիս :

Եղերուք զթաճք՝ որպէս և հայրն ձեր
 երկնաւոր զթաճ է :

Եղեցի ձեր բան, այնն այն, և նշն ո՛չ :

Երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս :

Երանի՛ որոց ոչ իցէ տեսեալ (զիս)՝ և
հաւատասցեն :

Զամենայն՝ զըր միանդամ կամիջիք՝ թէ
արասցեն ձեզ մարդիկ : այնպէս և դուք
արարէ՛ք նոցա :

Զամենայն ինչ, զոր և խնդրիցէք յա-
զօթս հաւատովք՝ առնուցուք :

Զայս սլատուիրեմ՝ զի սիրեսջ՛ք զմի-
մեանս :

Զգոյշ լիբււք ողորմութեան ձերում մի
առնել առաջի մարդկան որպէս թէ՛ ՚ի ցոյց
ինչ նոցա :

Զի՞ տեսանես զշիզ յախան եղբօր քոյ,
և ՚ի քում ախան զղերանդ ոչ նշմարես :

Զի՞ ոչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս
ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցի :

Ընէ՛ ամենայն դադարի բանի՝ զոր խօ-
սիցեն մարդիկ, տացեն համար յաւուր դա-
տաստանի :

Ընդարձակ է դուռնն, և համարձակ ծա-
նապարհն, որ տանի 'ի կորուստ :

Ի բանից քոց արդարասցիս, և 'ի բանից
քոց պարտաւորեսցիս :

Ի յաւելուածոյ սրաի խօսի բերան :

Ի պտղոյ անտի ծառն ճանաչի :

Ի պտղոյ 'նոցա՝ ծանիջիք զնոսա :

Ի տան հօր իմոյ՝ օխեանք բազում են

Իւրօքանչիւր ծառ՝ 'ի պտղոյ իւրմէ ծա-
նալի :

Լուծի՛մ քաղցր է, և բեռն իմ փոքրոզի :

Խնդրեցէ՛ք, և տացի ձեզ, հայցեցէ՛ք, և
զտջեք, բախեցէ՛ք, և բացցի ձեզ :

Ծառ բարի պտուղ բարի առնէ, և ծառ
չար՝ պտուղ չար առնէ :

Ծառայ՝ որ զխտիցէ զկամս տեառն իւ-
րոյ՝ և ոչ պատրաստեսցի ըստ կամաց նորա,
որքցէ զան բազում : Եւ որ ոչն զխտիցէ
և արժանի զանի ինչ գործիցէ, որքցէ զան
ասկալ :

Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ,
և երկուքին՝ ՚ի խորխորատ անկանին :

Հայկցարուք ընդ ազուաւս, զի ոչ սեր-
ժանեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն շտե-
մարանք, ոչ համբարանոցք, և Աստուած
կերակրէ զնոսա. որչափ ևս առաւել զձեզ
որ լաւ էք քան զԹռչունս :

Հայր՝ մի՛ կոչէք ձեզ յերկրի. զի ձեր
մի է հայր, որ յերկինս է :

Հան՝ նախ զգերանդ յականէ քուժմէ,
և ապա հայեսցիս հանել զշիւղ յականէ եղ-
բօր քոյ :

Հաստատուն կայէք ՚ի սէր իմ :

Հարկ է գալ գայթակղութեանց . բայց
վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայ-
թաղղութիւն :

Հողի է Աստուած, և երկիրպագուաց
նորա՝ հողուով և ծշմարտութեամբ պարտ
է երկիրպագանել :

Մարգարէ յիւրում գաւառի պատիւ

ոչ ունի :

Մարդ բարի՛ ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս :

Մեծն՛ ՚ի ձէնջ՛ եղիցի ձեր սպասաւոր :

Մի՛ այսուհետև հոգայէ՛ք՝ և ասիցէ՛ք՝ զի՞նչ կերիցուք՝ կամ զի՞նչ զկեցցուք . . . քանզի զիտէ հայրն ձեր երկնաւոր [Թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն :

Մի՛ արկանէ՛ք զմարդարիտ ձեր առաջի խոզոց :

Մի՛ դատէ՛ք՝ զի մի՛ դատիցիք :

Մի՛ զոք կոչէ՛ք վարդասպետ, զի մի է ձեր ուսուցիչ :

Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէ՛ք :

Մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեզ Քրիստոս է :

Մի՛ տայք զսրբութիւն շանց :

Յայսմ զիտասցենն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէ՛ք զմիմեանս :

Յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղքատս և շինուո՛ւ, զկաղս և զկոյրս, և երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ, և հատուցի քեզ փոխարէն 'ի յարութեան արդարոց:

Յորժամ առնիցէ՛ք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասցիք թէ ծառայք անպիտանք եմք, զոր սլարտէաքն առնել՝ արարաք:

Յորժամ կայցես յաղօթս, մա՛ւտ 'ի սենեակ քո, և փակեա՛ զդուրս քո, և կայց յաղօթս առ հայր քո 'ի ծածուկ:

Յորժամ կայցէ՛ք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իբրև զհեթանոսս:

Յորժամ յաղօթս կայցէ՛ք, թողուցուք եթէ ունիցիք ինչ զուժքէ՛, զի և հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ՛ ձեզ զյանցանս ձեր:

Յորժամ ողորմութիւն առ իցես, մի՛ գիտասցէ՛ ձախ քո՝ զինչ գործէ՛ աջ քո:

Յորժամ սլահիցէ՛ք, մի՛ լինիք իբրև ըզ-

կեղծաւորսն արամեայք, որ ասպականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեացին մարդկան՝ թէ պահիցեն :

Նովին՝ չափով որով չափէք՝ չափեացի ձեզ :

Շարաթ վասն մարդոյ եղև, և ոչ եթէ մարդ՝ վասն շարաթու :

Շատ է աշակերտին՝ իթէ եղեցի իբրև զվարդապետ իւր, և ծառային իբրև ըզտէր իւր :

Ոչ եթէ ՚ի վշոց քաղեն զթուզ, և ոչ ՚ի մորենեոյ կթեն խաղող :

Ոչ եկի կոշեւ զարդաս, այլ զմեղաւորս :

Ոչ են պիտոյ բժիշկ սղջոց, այլ հիւանդաց :

Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ոչ ծառայ՝ քան զտէր իւր :

Ոչ է բարւոք առնուլ զհայ մանկանց՝ և արկանել շանց :

Ոչ է ծառայ՝ մեծ քան զտէր իւր և

նչ առաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն զնա :

Ո՛չ մարգարէ անարգ՝ բայց եթէ ՚ի գաւառի իւրում և յազգատոհմի՝ և ՚ի տան իւրում :

Ո՛չ ինչ է ՚ի ծածուկ՝ որ ո՛չ յայտնեսցի և գաղանի որ ո՛չ ծանիցի :

Ո՛չ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, և ո՛չ ծառ չար պտուղ բարի առնել :

Ո՛չ կարէ քաղաք թագչէլ՝ որ ՚ի վերայ լերին կայցէ :

Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի :

Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ :

Ո՛չ ոք կարէ երկուց տէրանց ծառայել. կամ զմին ատիցէ՝ և զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ՝ զմիւսն արհամարիցէ :

Որ առնիցէ զկամս հօր իմոյ, որ յեր-

կինս է, նա՛ է իմ եղբայր՝ և քոյր և մայր:

Որ ասիցէ ցեղքոյր իւր՝ յիմար, սարտաւոր լիցի ասենի:

Որ արքունացէ միում ՚ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէ՛ն ասեմ ձեզ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր:

Որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, սարտաւոր լիցի դատաստանի:

Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի:

Ո՛ր դնայ ՚ի խաւարի՝ ո՛չ զխտէ յ՛ ի երթայ:

Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա:

Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զսուաքիչն իմ:

Որ ինչ ՚ի մարդոյն ելանէ՝ այն սղծէ զմարդ, զի ՚ի ներքուստ ՚ի սրտէ մարդկան՝ խորհուրդք չարութեան ելանեն:

Որ 'ի փոքուն հաւատարիմ է՝ և 'ի բազմին հաւատարիմ է. և որ 'ի փոքուն անիրաւ և 'ի բազմին անիրաւ է :

Որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ. և որ բախէ՝ բացցի նմա :

Որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ, և որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել, եղիցի ձեր ծառայ :

Որ կորուսցէ զանձն իւր վասն աւետարանին, սպաւեցուցէ զնա :

Որ ո՛չ ընդիս է՝ հակառակ իմ է, և որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցրուէ :

Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա՛ է որ սիրէ զիս :

Որ ոք գայթակղեցուցէ զմի 'ի փոքրկանցս յիս հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախիցի երկան իշոյ ընդ պսրանոց նորա, և ընկղմիցի 'ի խորս ծովու :

Որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք :

Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ :

Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մար-
դիկ՝ այնպէս արասջե՛ք և դուք նոցա :

Ուսարձք յիննն՝ զի հեզ եմ և խո-
նարհ սխալի :

Ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ
յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա :

Չէ մարգարէ ընդունելի 'ի քաղաքի իւ-
րում :

Չէ յարուցեալ 'ի ճնունդս կանանց՝ մեծ
քան զՅովհաննէս Մկիտիչ :

Պատուիրանն նոր տամ ձեզ՝ ձեզ զի սի-
րիցէք զմիմեանս :

Պարտ է 'ի շարս թու բարիս գործել :

Սիրեցէք զթշնամիս ձեր :

Տո՛ւք զկայսերն, կայսեր և զԱստուծոյն՝
Աստուծոյ :

Օրհնեցէք զանիծիչս ձեր :

ՎԵՐՁ

ԾԱՆՐ ՈՒՍԾԱՆՅ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆԻ

Ըզ Քեզ ս՞ ետես... այլ մեք ճանաչեմք,
 Զի՛ ՚ի Քննեղեաք, Քէ կահք, Քէ շնչեմք
 Առանց Առարչիդ խնամոց ոչինչ եմ,
 պահեալ զմեզ, Տէ՛ր, զՔննեղ աղաչեմք :

ԱՂԹԹԲ

ամեն օրուան :

Մեծ ես Դու, Տէ՛ր, մեծ են Քո փառք,
 Աստուած հրղօր :

Օրհնեալ գովեալ յերկինս ՚ի վեր՝ յերկիր
 ՚ի ստոր :

Սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ Տէ՛ր հրաշածայնեալ
 յերգ հոգեոր :

Էկոց Էսկոց յէկոց օրհնիս հանապաղօր :
 Ոչինչ եմք մեք, ոչինչ զօրեմք Քո առաջի :

Կալ, և օրհնեալ ձայնից յօղել ըստ
 պատշաճի :

Իւրթականիս արխեղծ յարկաւ ծանրեմք
 յերկրի :

Թէ ոչ կացցէ մեզ զօրաւիչ քո հովանի:
 Բամեայքս ասուն վերուղերձեմք արդ
 անունաց

Քեզ փառք, պատիւ և դոհուն թիւն բազ
 կատարած:

Ամենա՛նշն, Ամենազօր, Հասարի, Աստուած,

Մեք աստիճաքք քոյոյ ձեռնիս կմք ըս
 տեղծուած:

Յայտնի ուսաք, զի քե՛ւ շարժիմք քե
 կմք, քե կեամք,

Ի քէն ունիմք զոր ինչ ունիմք, առ քեզ
 կարդամք:

Ի մեր վերայ եղ՛ցի միշտ քաղցր քո
 խնամք,

Աճե՛լ ՚ի շնորհս, առնել ընդ որ հաճի
 քո կամք:

Տե՛ս, Տէ՛ր, զթա՛ս, կեցո՛ւ զմեր վե՛հ Բա
 բերարս,

Վարձ տուր նոցա աստ և յերկնից յան
 ճառ ՚ի փառս:

I know how much
my family means
to you.

Книга мудрости
Сын Божий, мръ
Пасторъ.

Косоват
Книга мудрости
Сын Божий

Косоват
Косоват

◆ 000 ◆

XDCPFB

XDCPFB

◆ 0000000000 ◆

◆ 0000000000 ◆



XDCPFB ◆

XDCPFB

[Faint, illegible handwritten text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is mostly obscured by a large, dark, diagonal scribble.]

step 104

КОМЕЦЪ

КЪМЪ

КОМЪ

КОМЪ

Հայաստանի Հանրապետության
Բնօրինակ արձանագրություն
մասին ՀՀ Կրթության նախարարության



« Ազգային գրադարան



NL0108411

